Ուսուցչի ձեռնարկ

7

Քրիստոնեական պրակտիկա

Քրիստոնեական պրակտիկա

ԽՍԼ ՆՔՀ
Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար

Քրիստոնեական պրակտիկա

Կապված տեղական եկեղեցու և նրա պրակտիկայի հետ

Հեղինակ՝ Դեյվիդ Բեթթի

Ուսուցչի ձեռնարկ

5-րդ խմբագրում

ԽՈՒՆՔՀ
Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար

Քրիստոնեական պրակտիկա

Կապված տեղական եկեղեցու և նրա պրակտիկայի հետ

Ուսուցչի ձեռնարկ
5-րդ խմբագրում
Հեղինակ՝ Դեյվիդ Բեթթի

Եթե այլ կերպ նշված չէ, աստվածաշնչյան բոլոր մեջբերումներն արված են Trinitarian Bible Society (Tyndale House, Dorset Road, London, SW19 3NN, England)-ի կողմից կատարված ժամանակակից թարգմանությունից:

Բոլոր իրավունքները, ներառյալ ներկայացնելու կամ որևէ ձևով՝ ամբողջական կամ մասնակի, վերատպելու, պաշտպանված է Համաշխարհային հեղինակային իրավունքի կոնվենցիայով և մյուս կոնվենցիաներով, պայմանագրերով ու հռչակագրերով:

Այս դասընթացը սկզբում լույս է տեսել անգլերեն, Christian Practices, 5th edition վերնագրով:

Այս նյութը կարող է վերատպվել և բաժանվել, որպեսզի օգտագործվի Թին Չելենջի, նմանատիպ ծրագրերի, տեղական եկեղեցիների, դպրոցների, այլ կազմակերպությունների և անհատների համար: Այս նյութերը նաև կարող են ներբեռնվել հետևյալ կայքից՝ www.iTeenChallenge.org: Նրանք, ովքեր կցանկանան վաճառել այս նյութերը, պետք է գրավոր թույլտվություն ստանան Գլոբալ Թին Չելենջից:

Այս դասընթացը *Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար* դասընթացի մի մասն է, որը մշակվել է, որպեսզի օգտագործվի եկեղեցիներում, բանտային ծառայություններում, Թին Չելենջում և նմանատիպ ծառայություններում, որտեղ աշխատում են նորադարձ քրիստոնյաների հետ: Դասընթացի մեջ մտնում են՝ Ուսուցչի ձեռնարկը, Ուսանողի ձեռնարկը, Ուսուցման ուղեցույցը, Ստուգարքը և Վկայականը: Դրանց մասին առավել տեղեկություններ ստանալու համար դիմել.

Global Teen Challenge
PO Box 511
Columbus, GA, 31902 USA
Email: gtc@globaltc.org
Web: www.globaltc.org
www.iTeenChallenge.org

ԽՈԼՆՔՀ
Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար

Վերջին անգամ վերանայվել է. 10-2022

Քրիստոնեական պրակտիկա

Այս ուսուցողական դասընթացի վեց թեմաները վերաբերում են տեղական եկեղեցուն: Հիմնական կենտրոնացումն այն բանի վրա է, թե ինչպես կարող են նորադարձ հավատացյալները մյուս հավատացյալների հետ իմաստալից մասնակցություն ունենալ իրենց համայնքային եկեղեցում:

1 **Գլուխ 1. Տեղական եկեղեցին**

Մենք ուսումնասիրում ենք, թե ինչ է եկեղեցին և ինչու այսօր կան եկեղեցիներ: Մենք նաև ուսումնասիրում ենք, թե ինչպես է Աստված ուզում, որ տեղական եկեղեցիները ծառայեն մարդկանց իրենց համայնքներում:

2 **Գլուխ 2. Ինչպես վկայություն տալ**

Այս գլխում քննարկվում է, թե ինչպիսի թեմաներ ներառել, երբ մարդկանց պատմում ես, թե ինչ է անում Աստված հիմա քո կյանքում:

3 **Գլուխ 3. Ինչպես լինել Աստծո տնտես**

Մենք ուսումնասիրում ենք, թե ինչպես կարող են հավատացյալները լավագույնս օգտագործել Աստծո տված բարիքները: Քննարկվող հիմնական ասպարեզներն են՝ մեր ժամանակը, ընդունակությունները և անձնական ունեցվածքը:

4 **Գլուխ 4. Հաղորդություն**

Այս դասի հիմնական խնդիրն է՝ հետազոտել, թե ինչ նպատակ ունի հաղորդությունը հավատացյալների համար այսօր:

5 **Գլուխ 5. Ջրի մկրտություն**

Մենք հետազոտում ենք, թե ինչու հավատացյալները պետք է ջրով մկրտվեն: Այս գլխի հիմնական շեշտադրումը ջրի մկրտության հետևում եղած հոգևոր իմաստի հստակ հասկացողություն ունենալն է:

6 **Գլուխ 6. Աղոթք**

Այստեղ ուսումնասիրում ենք, թե ինչ է աղոթքը, և ինչ պետք է ներառված լինի մեր աղոթքների մեջ: Մենք նաև քննարկում ենք, թե ինչպես պատասխան ստանանք մեր աղոթքներին:

Ինչ է ներառված Ուսուցչի ձեռնարկում

Ուսուցչի ձեռնարկն ունի չորս բաժին: Յուրաքանչյուր բաժին առանձնացված է հիմնական վերնագրով:

1. Դասի ծրագրեր ուսուցչի համար,
2. Ուսանողի ձեռնարկ,
3. Ուսուցման ուղեցույց,
4. Ուսանողի ստուգարք, պատասխաններ և դասընթացի վկայական:

Բացատրությունը, թե ինչպես օգտագործել յուրաքանչյուր բաժինը, տրվում է անմիջապես տվյալ էջը ներկայացնելուց հետո:

Նախաբան

Այս դասընթացը մեկն է այն դասընթացներից, որոնք նախատեսված են նորադարձ քրիստոնյաների համար: Մենք հավատում ենք, որ այսօր մեծ կարիք կա օգնելու նորադարձ քրիստոնյաներին Քրիստոսի ուսմունքը գործնականորեն կիրառելու իրենց կյանքում: Դասընթացները կարող են օգտակար լինել նաև եկեղեցու երիտասարդների և մեծահասակների ծառայության մեջ, ովքեր ուզում են քրիստոնեությունն իրենց ամենօրյա կյանքի առավել գործնական մասը դարձնել:

Այս դասընթացի և ամբողջ՝ *Խմբային ուսուցումներ նոր քրիստոնյաների համար*-ի հիմնական նպատակն է՝ նորադարձ քրիստոնյաներին ներկայացնել նշանակալի, կյանքին վերաբերող հարցեր: Մենք չենք փորձում ներկայացնել այդ թեմաների սպառիչ ուսումնասիրությունները:

Թին Չելենջի՝ ԱՄՆ-ի ուսումնական ծրագրի կոմիտեն ծրագրավորում է շարունակել վերանայել այս դասերը: Մենք պատրաստ ենք ընդունել այս նյութերի զարգացման վերաբերյալ ձեր ունեցած ցանկացած քննադատություն կամ միտք:

Ինչպես օգտագործել Ուսուցչի ձեռնարկը

1. Դասերի ծրագրեր ուսուցչի համար

Այս բաժնի առաջին էջն ընդհանուր պատկերացում է տալիս ողջ դասընթացի վերաբերյալ:

Հաջորդ էջը *Դասարանական Հանձնարարության Ցուցակ -ի* մի օրինակ է: Այն ցույց է տալիս, թե երբ պետք է Ուսուցման ուղեցույցի յուրաքանչյուր նախագիծ լրացվի և երբ յուրաքանչյուր հարցաշար և ստուգարք տրվի: Ուսուցման ուղեցույցներն արդեն ունեն այս ձևի չլրացված բլանկները հետևի կազմի ներսի կողմում:

Հաջորդը կլինի դասերի ծրագրերը յուրաքանչյուր դասի համար: Այս բոլոր դասերի ծրագրերն ունեն Աստվածաշնչյան Բանալի ճշմարտություն և Բանալի համար: Դրանք կարող են տրվել դասի սկզբում: Դրանք նաև օգնում են քննարկումը պահել հիմնական թեմայի վրա ողջ դասի ընթացքում:

Ներքևում կան Աստվածաշնչյան Բանալի ճշմարտության և Բանալի համարի մի քանի մեկնաբանություններ՝ թե ինչպես սովորեցնել դասը: Շատ դեպքերում հղումներ են արվում Ուսանողի ձեռնարկին կամ Ուսուցման ուղեցույցի նախագծերին:

Յուրաքանչյուր դաս ամփոփվում է «անձնական կիրառություն» քայլով: Սրա կարևորությունը չի կարող գերագնահատվել: Նորադարձ քրիստոնյաները կարիք ունեն հստակ առաջնորդություն ստանալու, թե ինչպես այս աստվածաշնչյան ուսուցումները կիրառեն իրենց ամենօրյա կյանքում: Համոզվա՛ծ եղեք, որ բավականաչափ ժամանակ եք տալիս ձեր ուսանողներին, որպեսզի սկսեն այս անձնական կիրառման ընթացքը:

Յուրաքանչյուր դասի ծրագրի վերջում ուսանողի համար կա հանձնարարությունների ցուցակ:

Այս դասընթացներից շատերը նախատեսված են հինգ դասերի համար՝ յուրաքանչյուրը մեկ ժամ տևողությամբ: Այս բոլոր 14 դասընթացները կարելի է ավարտել 3-4 ամիսների ընթացքում, եթե դուք շաբաթական հինգ օր դասեր ունենաք: Եթե դուք ունենաք շաբաթական մեկ ժամ, ապա մեկ դասընթացը կարող եք ավարտել մեկ ամսում, իսկ ամբողջ շարքը՝ մոտ մեկ տարում: Այս դասերից շատերը հեշտությամբ կարելի է անցկացնել ավելի երկար ժամանակահատվածում կամ վերածել ավելի շատ դասերի:

2. Ուսանողի ձեռնարկ

Ուսանողի ձեռնարկը կարող է ծառայել երկու նպատակների: Դուք կարող եք հանձնարարել ուսանողներին՝ կարդալ համապատասխան էջերը՝ տրված դասին նախապատրաստվելու համար: Կամ էլ կարող եք հանձնարարել նրանց՝ այն կարդալ դասը անցկացնելուց հետո՝ վերանայելու և ամրացնելու այն, ինչ ուսուցանվեց դասարանում:

Մենք քաջալերում ենք, որ դուք ուսանողներին հանձնարարեք նշումներ անել դասարանում, չնայած այն բանին, որ նրանց տալիս եք Ուսանողի ձեռնարկը: Նրանց անձնական նշումները և դասարանական քննարկումները կօգնեն պարզաբանել Ուսանողի ձեռնարկի որոշ թեմաներ:

3. Ուսուցման ուղեցույց

Ուսուցման ուղեցույցի նախագծերը նախատեսված են ուսանողներին դասասենյակից դուրս աշխատանքով ապահովելու համար: Որոշ նախագծեր կօգնեն ուսանողներին նախապատրաստվել հաջորդ քննարկմանը:

Նախագծերից շատերը նախատեսված են օգնելու ուսանողներին՝ ավելի խորը նայել դասարանում քննարկված որոշ թեմաներ: Այս հանձնարարությունների հիմնական նպատակն է՝ օգնել ուսանողներին բացահայտել, թե ինչպես աստվածաշնչյան ճշմարտությունները կիրառեն իրենց ամենօրյա կյանքում:

4. Ուսանողի ստուգարք և Ստուգարքի պատասխաններ

Ստուգարքները նախատեսված են պարզ կերպով գնահատելու յուրաքանչյուր ուսանողի առաջընթացը՝ դասընթացի ընթացքում անցած աստվածաշնչյան ճշմարտությունները հասկանալու հարցում: Ստուգարքի պատասխանները գտնվում են այս Ուսուցման ձեռնարկի՝ ուսանողի ստուգարքի նմուշի վերջին էջից անմիջապես հետո:

5. Դասընթացի վկայական

Դասընթացի վկայականը որպես գնահատանք պետք է տրվի նրանց, ովքեր կավարտեն դասընթացի համար պահանջվելիք ամբողջ աշխատանքը և բարեհաջող կհանձնեն ստուգարքը: Դասընթացի վկայականը գտնվում է Ուսուցչի ձեռնարկի վերջին էջում: Ավարտական վկայական կարող է տրվել նաև այն ուսանողներին, ովքեր կավարտեն *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար*-ի բոլոր 14 դասընթացների շարքը: Նմուշը ներառված է «Ուսուցիչներին ներկայացնել խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար» գրքում:

Դասընթացների ակունքները

Սողոմոնն ասաց, որ արևի տակ նոր բան չկա: Նույնը կարելի է ասել նաև այս դասերի մասին: Այս մտքերից շատերը նոր չեն: Մենք ուզում ենք արտահայտել մեր հատուկ գնահատականը *Կյանքի հիմքային սկզբունքների ինստիտուտին* այն ազդեցության համար, որ նրանք ունեցել են այս նյութերը մշակող մարդկանց վրա: Այս դասերից շատերը կրում են *Կյանքի հիմքային սկզբունքների ինստիտուտի* հետքերը:

Ես նաև ուզում եմ արտահայտել իմ խորին երախտագիտությունն այն բազմաթիվ ուսուցիչներին ու հազարավոր նորադարձ քրիստոնյաներին, ովքեր օգտագործել են այս նյութերը վերջին մի քանի տարիների ընթացքում: Նրանց տված գաղափարները մեծ դեր են խաղացել այս դասընթացների մշակման մեջ: Ես նաև շատ երախտապարտ եմ Դոն Վիլկերսոնին, որն ինձ հնարավորություն տվեց աշխատել Բրուկլինում (Նյու Յորք) 1971-1975թթ.-ին: Այդ տարիներին էր, որ *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար*-ի մշակումն առաջին անգամ սկսվեց:

Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար դասընթացների հինգերորդ խմբագրումը մշակվել է Թին Չելենջի՝ ԱՄՆ-ի Ուսումնական ծրագրի կոմիտեի օգնությամբ: Հատուկ շնորհակալություն բոլոր նրանց, ովքեր աջակցել են այդ վերանայման գործընթացին:

Այս նյութերը վերատպելու վերաբերյալ մոտեցումը

Ուսուցչի ձեռնարկը, ինչպես նաև ուսանողական մյուս բոլոր նյութերը, որոնք վերաբերում են *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար* դասընթացներին, պաշտպանված են հեղինակային իրավունքով: Այս նյութերը կարող են վերատպվել և բաժանվել օգտագործելու նպատակով Թին Չելենջում, նմանատիպ ծրագրերում, տեղական եկեղեցիներում, դպրոցներում և այլ կազմակերպություններում, ինչպես նաև անհատների համար: Այս նյութերը նաև կարող են ներբեռնվել համացանցում հետևյալ կայքից՝ www.iTeenChallenge.org: Սակայն այս նյութերը չեն կարող վաճառվել, այլ միայն՝ անվճար բաժանվել: Նրանք, ովքեր ուզում են տպագրել և վաճառել դրանք, պետք է գրավոր թույլտվություն ձեռք բերեն Գլոբալ Թին Չելենջից:

Խորհուրդ է տրվում ուսուցման հետևյալ հերթականությունը

Այս դասընթացը *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար* շարքի 14 ուսուցումներից մեկն է: Բոլոր 14 դասընթացները այստեղ ներկայացված են ուսուցման՝ խորհուրդ տրված հերթականությամբ: Հերթականության ցանկը մշակվել է դասընթացների շարունակական ուսուցման համար: Ավելի լավ կլինի այն ձևել 14 ճաղեր ունեցող անիվի նման: Այս դասընթացները կառուցված չեն մեկը մյուսի վրա: Ամեն մեկն առանձին է: Այնպես որ, ուսանողները կարող են միանալ դասերին ցանկացած կետում և շատ հեշտությամբ հարմարվել:

1. Ինչպե՞ս կարող եմ վստահ լինել, որ ես ճշմարիտ քրիստոնյա եմ
2. Թռուցիկ հայացք Աստվածաշնչին
3. Վերաբերմունքներ
4. Փորձություններ
5. Հաջողակ քրիստոնեական կենսակերպ (ներառում է դասեր Սուրբ Հոգու ծառայության վերաբերյալ)
6. Աճել ձախողումների միջոցով
7. Քրիստոնեական պրակտիկա (շփում Տեղական եկեղեցու հետ)
8. Հնազանդություն Աստծուն
9. Հնազանդություն մարդուն
10. Բարկություն և անձնական իրավունքներ
11. Ինչպես ուսումնասիրել Աստվածաշունչը
12. Սեր և ինքնաընդունելություն
13. Անձնական փոխհարաբերություններ մարդկանց հետ
14. Հոգևոր զորություն և գերբնականը

Այս դասընթացների ուսուցման նպատակով լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս *«Ուսուցիչներին ներկայացնել խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար»* գիրքը:

Դասի ծրագրեր
ուսուցիչների համար

Տե՛ս սույն Ուսուցչի ձեռնարկի 4-րդ էջը՝ այս դասերի ծրագրերի օգտագործման վերաբերյալ ավելի շատ տեղեկություններ ստանալու համար:

Դասընթացի ընդհանուր նկարագրություն

1. Առաջին դասաժամից մեկ կամ երկու օր առաջ, դու կարող ես այս դասընթացը ներկայացնել ուսանողներին և տալ առաջին հանձնարարությունները: Եթե հնարավոր է, բաժանի՛ր Ուսուցման ուղեցույցն այս դասընթացն ուսուցանելուց մեկ կամ երկու օր առաջ: Ուսանողի ձեռնարկը բաժանի՛ր հիմա: Հանձնարարի՛ր նրանց, որ կարդան 1-ին գլուխը, որը քննարկվելու է առաջին դասաժամին:

2. Հաջորդ էջում կա ***Դասարանական Հանձնարարության Ցուցակ*** մի օրինակ, որտեղ կան այն ամսաթվերը, թե երբ պետք է յուրաքանչյուր հանձնարարություն կատարվի: Թող նրանք լրացնեն համապատասխան ամսաթվերը՝ օգտագործելով Ուսուցման ուղեցույցի վերջում գտնվող՝ ***Դասարանական Հանձնարարության Ցուցակ*** դատարկ օրինակը:

3. Ուսանողներին տեղյա՛կ պահիր, որ նրանք պետք է Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 1-ինը լրացրած լինեն նախքան առաջին դասաժամը:

4. Յուրաքանչյուր դասի ծրագիր տալիս է մեկ կամ ավելի՝ ***Դասի ջերմացման գործողություն*** դասի սկզբում օգտագործելու համար: Այս գործողությունների հիմնական նպատակն ուսանողներին օգնելն է՝ իրենց ուշադրությունը տվյալ դասի հիմնական թեմայի վրա կենտրոնացնելու համար: Մենք ուզում ենք ստեղծել ջերմության և անկեղծության մթնոլորտ, որտեղ բոլոր ուսանողներն իրենց ազատ կզգան դասաժամին մասնակցելու առումով:

   Խնդրում եմ՝ հաշվի՛ առ, որ 3-րդ դասին, որն Աստծո տնտես լինելու մասին է, դասի ջերմացման գործողությունը քեզ կոչ է անում հարցազրույցի հրավիրել ինչ-որ մեկին, որը վերջերս որպես մենեջեր աշխատել է բիզնեսի ոլորտում: Նախապես որոշի՛ր, թե ով է լինելու այդ անձնավորությունը, կամ ընտրի՛ր որևէ մեկին քո դասարանից, կամ էլ քո եկեղեցուց, ընկերական շրջապատից կամավո՛ր փնտրիր, ով պատրաստակամ կլինի գալ քո դասարան այդ հարցազրույցի համար:

5. Դու պետք է կողմնորոշվես, թե քանի դասաժամով ես անցնելու այս դասընթացը: Հաջորդ էջերում դու կգտնես դասի ծրագրեր յոթ դասաժամի համար: Եթե դու ստիպված լինես ծրագիրը խտացնել 4 դասաժամի մեջ, իսկ 5-րդը՝ ստուգարք, ապա պետք է որոշես, թե որ թեմաներն ես միավորելու մեկ դասաժամի մեջ:

Դասարանական հանձնարարության ցուցակ

Դասընթացի վերնագիրը Քրիստոնեական պրակտիկա

Հարցաշարեր Անգիր համարներ Ամսաթիվ

1. Եփեսացիներին 4:29 օր 2.
2. Բ Կորնթացիներին 9:7 օր 3.
3. Կողոսացիներին 3 :23 օր 4.

Նախագիծ Ամսաթիվ

1. օր 1.
2. օր 3.
3. օր 3.
4. օր 4.
5. օր 4.
6. օր 5.

Ստուգարք Ամսաթիվ օր 7.

1 Դասի ծրագիր 1.
Տեղական եկեղեցին

1. **Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն:**

Ես կարող եմ վայելել եկեղեցին՝ ներգրավվելով եկեղեցական մարդկանց հետ հաղորդակցության մեջ:

2. **Բանալի համար. Եփեսացիներին 4:16.**

«Ումից բոլոր մարմինը, հոդերի միջոցով միացած և միահյուսված, յուրաքանչյուր մասի ներգործուն աշխատանքի չափով, աճում է և կառուցվում սիրո մեջ»:

3. **Հղում ուսանողական նյութերին:**

Ուսանողի ձեռնարկի 1-ին գլուխը համընթաց է այս դասի հետ: Ուսանողի ձեռնարկ, Նախագիծ 1-ինը՝ «Սահմանում», նույնպես կօգտագործվի այստեղ:

4. **Դասի ջերմացման գործողություն** (5 րոպե):

Թող երկու կամ երեք հոգի կիսվեն իրենց հիշողություններով, թե ինչպես են առաջին անգամ մտել եկեղեցի: Որոշ ուսանողներ, հնարավոր է, մեծացել են այնպիսի ընտանիքում, որի անդամները պարբերաբար գնացել են եկեղեցի: Եթե դու այսպիսի պատասխան ստանաս, ուրեմն վերաձևակերպի՛ր քո հարցը, որպեսզի այլ պատասխան ստանաս:

Ձեզնից քանի՞սն են ճշմարիտ քրիստոնյա դարձել պատանի կամ մեծ տարիքում: Ի՞նչ եք հիշում եկեղեցուց՝ նախքան ճշմարիտ քրիստոնյա դառնալը:

Մենք այստեղ ճիշտ կամ սխալ պատասխաններ գտնելու նպատակ չենք հետապնդում: Մատնանշի՛ր, որ մեր անցյալի փորձառությունն այսօր կարող է նշանակալի ազդեցություն ունենալ եկեղեցիների հանդեպ մեր վերաբերմունքի վրա:

5. **Անցկացրո՛ւ Ա. կետը. «Ի՞նչ է նշանակում «եկեղեցի» բառը»** (5-10 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 5-6-րդ էջեր:

Օգտագործելով Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 1-ինի 1-ին հարցը՝ ուսանողները թող կիսվեն «եկեղեցի» բառի իրենց սահմանումներով: Կիսվելուց հետո համառոտ քննարկե՛ք «եկեղեցի» բառի տարբեր սահմանումները, որոնք գտնվում են Ուսանողի ձեռնարկի 5-6-րդ էջերում:

3-րդ ենթակետ. «Եկեղեցու աստվածաշնչյան պատկերները» ներկայացնելիս աշխատի՛ր դա կատարել համառոտ: Պարզապես համոզվի՛ր, որ նրանք հասկանում են, որ երբ այս պատկերների վերաբերյալ աստվածաշնչյան հատվածներ են կարդում, պետք է այն մեկնաբանեն որպես խորհրդապատկեր կամ նմանություն:

6. **Անցկացրո՛ւ Բ. կետը. «Ինչո՞ւ գոյություն ունի տեղական եկեղեցի»** (6-7 բոպե), Ուսանողի ձեռնարկ, 5-րդ էջ:

Այս երկու կետերը ներկայացնելիս դու կարող ես տեսնել, որ որոշ մարդիկ՝ ներառյալ նրանք, ովքեր երկար տարիներ մասնակցել են եկեղեցում, հնարավոր է՝ չհամաձայնեն այս երկու կետերի առաջնահերթության հետ:

Այս երկու կետերը ներկայացնելիս շեշտադրի՛ր, որ երկուսն էլ կարևոր են: Եթե որևէ եկեղեցի անտեսի դրանցից մեկը, ապա նա շատ բան բաց կթողնի այն ամենից, ինչ Աստված ուզում է, որ նա ունենա:

Համառոտ ներկայացրո՛ւ երկու հիմնական պատճառները, թե ինչու գոյություն ունի տեղական եկեղեցի: Դասընթացի ընթացքում շարունակ անդրադարձի՛ր սրան:

Անպայման ընդգծի՛ր բոլորի, հատկապես՝ նորադարձ հավատացյալների ներգրավված լինելու կարևորությունը եկեղեցու մեջ: Սա առաջարկ չէ, սա հրամայական է նրանց հոգևոր աճի համար:

Կան եկեղեցիներ, որոնք այնպիսի տպավորություն են ստեղծում, որ եթե հավատացյալները միանում են եկեղեցուն, ուրեմն արդեն փրկված են: Շատ ուշադի՛ր քննարկեք այս հարցը, և համոզվի՛ր, որ քո ուսանողները հասկանում են, որ եկեղեցուն մասնակցություն ունենալը դեռ ոչ ոքի ճշմարիտ քրիստոնյա չի դարձնում:

Եթե դու սա անցկացնում ես Թին Չելենջի շրջանակներում, ընդգծի՛ր, որ շատ կարևոր է ծրագիրն ավարտելուց հետո տեղական որևէ եկեղեցու միանալը:

Բ. Ինչո՞ւ գոյություն ունի տեղական եկեղեցի:

1. Հավատացյալներին օգնելու համար, որպեսզի հոգևորապես ավելի աճեն և ուժեղանան:
2. Ոչ հավատացյալների հետ Քրիստոսի մասին կիսվելու համար:

Մեջբերումն արված է Ուսանողի ձեռնարկից, էջ 6-7-րդ:

1

7. **Ներկայացրո՛ւ Գ. կետը. «Ինչպե՞ս կարող եմ վայելել եկեղեցին»** (3-5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 7-10-րդ էջեր:

Շատ անգամ նորադարձ հավատացյալները իրենց խորթ են զգում, երբ այցելում են տեղական եկեղեցի: Այս հատվածը ներկայացնելիս բացատրի՛ր եկեղեցում ըստ կարգի մասնակցելու կարևորությունը: Շատ համայնքներում կան մի քանի եկեղեցիներ, այսինքն հավատացյալները կարող են ընտրություն կատարել, ըստ ցանկության որոշել, թե դրանցից որին հաճախեն: Անհրաժեշտ է շեշտել, որ կարևոր է ընտրությունն այնպիսի եկեղեցու, որտեղ նրանք կգտնեն հոգևոր սնունդ և փոխհարաբերություն հոգևորապես հասուն մարդկանց հետ:

Բացատրի՛ր, որ դասաժամի այս հատվածում մենք կդիտարկենք չորս բաղկացուցիչներ, որոնք կօգնեն հավատացյալներին եկեղեցի գտնելու հարցում, եկեղեցի, որը նրանց կյանքի վրա դրական ազդեցություն կունենա: Դու կարող ես պարզապես գրել այս չորս կետերը, որոնք մենք պետք է քննարկենք, իսկ հետո մանրամասնորեն կքննարկենք դրանիցից յուրաքանչյուրը՝ ինչպես սահմանված է այս դասի ծրագրի չորս կետերում:

Նշված կետերը կարող են օգտագործվել որպես ռազմավարություն՝ առողջ եկեղեցի գտնելու հարցում:

Գ. Ինչպե՞ս կարող եմ վայելել եկեղեցին (Գործք. 2:42)

1. Մենք հավաքվում ենք մեկտեղ՝ իրար հետ հաղորդակցվելու համար
2. Մենք հավաքվում ենք մեկտեղ՝ աղոթելու և երկրպագելու Աստծուն
3. Մենք հավաքվում ենք մեկտեղ՝ լսելու Աստծուն
4. Մենք հավաքվում ենք մեկտեղ՝ օգնելու մեկս մյուսին

Մեջբերումն արված է Ուսանողի ձեռնարկից, 7-10-րդ էջեր:

Դու կարող ես պլակատ պատրաստել վերոնշյալ չորս կետերի համար և այն փակցնել պատին, երբ որ կսկսեք քննարկումը:

8. **Անցկացրո՛ւ Գ-1. կետը. «Մենք հավաքվում ենք մեկտեղ՝ իրար հետ հաղորդակցվելու համար»** (5-7 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 7-8-րդ էջ:

Տեղական եկեղեցուն մասնակցելու առաջին պատճառը մյուս հավատացյալների հետ հաղորդակցվելն է: Աստված մեզ մեկուսացված քրիստոնյաներ լինելու կոչ չի անում: Նա ուզում է, որ մենք հաղորդակցվենք միմյանց հետ:

Ուսանողի ձեռնարկում թվարկված են մյուս հավատացյալների հետ հաղորդակցվելու հինգ ձևեր: Ժամանա՛կ հատկացրու դրանցից ամեն մեկը քննարկելու համար՝ օգտագործելով քո դասարանի ուսանողների անձնական օրինակները:

Ինչպես է մյուս հավատացյալների հետ հաղորդակցությունը մեզ օգնում:

ա. Օգնում է ճանաչել մյուս հավատացյալներին

բ. Հնարավորություն է տալիս քննարկել մեր հավատալիքները

գ. Սովորեցնում է սիրել մարդկանց

դ. Օգնում է հասկանալ, թե ինչպես կարող ենք մեկմեկու օգնել

ե. Օգնում է մեզ՝ աղոթել միմյանց համար

Ուսանողի ձեռնարկ, 7-րդ էջ:

Երբեմն նորադարձ քրիստոնյաները դժվարանում են ընկերանալ նոր մարդկանց հետ: Ընդգծի՛ր, որ կարևոր է նոր մարդկանց հետ ընկերանալու հարցում նրանց կողմից նախաձեռնությունը վերցնելը: Նրանք չպետք է սպասեն, որպեսզի իրենց մոտենան:

Հոգևոր ընկերները կարող են կարևոր դեր խաղալ նրանց հոգևոր աճի հարցում:

9. **Անցկացրո՛ւ Գ-2. կետը. «Մենք հավաքվում ենք մեկտեղ՝ աղոթելու և երկրպագելու Աստծուն»** (5-7 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 8-րդ էջ:

Տեղական եկեղեցի գնալու երկրորդ պատճառը Աստծուն երկրպագելն ու մյուս հավատացյալների հետ միասին աղոթելն է:

Մենք պետք է սովորենք, թե ինչպես երկրպագել Աստծուն: Ուսանողի ձեռնարկը սահմանում է «երկրպագություն» բառը. ասել տվյալ անձին, որ նա քեզ համար կարևոր է, գովել, հիանալ, պատվել ու մեծարել նրան:

Մենք կարիք ունենք սովորելու, թե ինչպես երկրպագելը իրականացնենք մեր կյանքում Աստծո հետ փոխհարաբերության մեջ: Մենք սա սովորաբար անում ենք երկու ձևով՝ երգերով, որոնք ուղղված են Աստծուն, և աղոթքով:

Շեշտադրի՛ր, որ սա պետք է անել ոչ միայն շաբաթը մեկ անգամ եկեղեցում, այլև կարևոր է այս երկու գործողությունները դարձնել մեր առօրյա կյանքի անբաժանելի մասը:

1

Աստվածաշնչում Աստծուն երկրպագող մարդկանց բազմաթիվ օրինակներ կան: Սաղմոսներից շատերը երկրպագության արտահայտություններ են: Ուսանողներին քաջալերի՛ր, որ ուսումնասիրեն Աստվածաշունչը՝ տեսնելու համար, թե ինչպես էին մարդիկ երկրպագում Աստծուն: Քաջալերի՛ր նրանց, որպեսզի կարդան երկրպագության այդ աղոթքները և անձնականացնեն դրանք՝ դարձնելով իրենց անձնական պաշտամունքի աղոթքները:

Մեկ այլ հանգամանք, որ այստեղ պետք է շեշտադրել, այն է, որ երկրպագությունը չպետք է լինի միայն իրենց անձնական գործը: Նրանք պետք է կոտրեն անձնականի կաղապարը և սովորեն Աստծուն երկրպագել մյուսների հետ միասին: Մենք Աստծո հատուկ ընտանիքի անդամներն ենք, և Աստված ուզում է, որ մենք սովորենք միասին երկրպագել Նրան:

Ավելի ուշ՝ այս դասընթացում, մենք մի ամբողջ դասաժամ կհատկացնենք աղոթքի թեմային: Այնպես որ, նրանց տեղյա՛կ պահիր այս մասին, և այս դասաժամին հատկացրո՛ւ միայն կարճ ժամանակ աղոթքի համար:

10. **Անցկացրո՛ւ Գ-3. կետը. «Մենք հավաքվում ենք մեկտեղ՝ լսելու Աստծուն»** (5-7 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 8-9-րդ էջ:

Տեղական եկեղեցի գնալու երրորդ պատճառը Աստծուն լսելու նպատակն է:

Ուսանողի ձեռնարկը նշում է հինգ տարբեր ձևեր այն մասին, թե ինչպես կարող ենք լսել Աստծուն: Եթե ուզում ես, կարող ես այլ ձևեր էլ ավելացնել, բայց հիշի՛ր, որ հիմնականում կենտրոնանում ես այն հանգամանքի վրա, թե ինչպես կարող է եկեղեցին լինել մի վայր, որտեղ մենք կկարողանանք լսել Աստծուն:

Ինչպես է Աստված մեզ հետ խոսում.

ա. Աստվածաշնչի միջոցով

բ. Աղոթքի միջոցով

գ. Սուրբ Հոգու պարգևների միջոցով

դ. Մյուս հոգևոր մարդկանց միջոցով

ե. Իրավիճակների միջոցով

Մեջբերումն արված է Ուսանողի ձեռնարկից, էջ 8-րդ:

Այստեղ ընդգծի՛ր երկու հիմնական կետեր.

1. Աստված ուզում է հաղորդակցվել մեզնից յուրաքանչյուրի հետ: Նա մեզ շատ է սիրում է և անձնական հաղորդակցություն է փափագում:
2. Մենք պետք է ակնկալիք ունենանք, որ Աստված կխոսի մեզ հետ, և ցանկանանք լսել Նրան:

Աստծուն լսելու հարցը պետք է գործնական մակարդակի վրա պահել: Մենք ամեն օր հաղորդակցվում ենք մեր շուրջը եղած մարդկանց հետ: Նմանապես՝ Աստծուն լսելը պետք է դիտենք որպես մեր առօրյայի բնական մաս:

Սա չի նշանակում, որ մենք Աստծո ձայնը կլսենք այնպես, ինչպես լսում ենք մարդկանց, այսինքն՝ մեր լսողության միջոցով, թեև երբեմն լինում են դեպքեր, երբ մարդիկ ֆիզիկապես լսում են Աստծո ձայնը:

Ուրեմն, ինչպե՞ս ենք մենք լսում Աստծո ձայնը: Ուսանողի ձեռնարկի 8-րդ էջի ցուցակը սկսվում է ամենատարածված ձևով՝ Աստվածաշունչ կարդալու ցուցումով:

Ամեն անգամ եկեղեցական պաշտամունքի գալով՝ մենք պետք է ունենանք հետևյալ մոտեցումը. «Աստվա՛ծ իմ, ես այսօր ուզում եմ լսել Քեզնից»: Պաշտամունքի յուրաքանչյուր հատվածում մենք պետք է մեր սրտում ուշադիր լինենք, թե ինչ է Աստված ուզում ասել մեզ:

Աստված կարող է մտքեր դնել քո սրտում, որ կապ ունի քո ունեցած խնդրի հետ: Կամ էլ, հնարավոր է, դու լուրջ որոշում ընդունես և Աստծո իմաստության կարիքն ունենաս դրա համար: Ակնկալի՛ր, որ Աստված կարող է խոսել քեզ հետ եկեղեցական պաշտամունքի տարբեր հատվածներում:

Մատնանշի՛ր, որ Աստծո՝ մեզ հետ խոսելու մեկ այլ տարածված միջոց է հովվի քարոզած պատգամը: Անպայման բացատրի՛ր հետևյալ 2 տարբերակները.

1. Աստված կարող է խոսել քեզ հետ հովվի քարոզի միջոցով: Երբեմն մարդիկ ասում են. «Այն, ինչ հովիվն ասաց, ինձ էր վերաբերում, և դա ինձ օգնեց այն հարցում, որից ես տառապում էի»: Դա Աստված է գործում՝ խոսելով քեզ հետ:
2. Հովվի ոչ բոլոր խոսքերն են միանշանակ Աստծուց գալիս: Լավ կլինի նշել, որ այն, ինչ հովիվն իր քարոզի մեջ ասում է, կարող է լինել.
   ա. Աստծո Խոսք. հատկապես, երբ կարդում է Աստվածաշնչից:
   բ. Աստծո Խոսքի բացատրություն. եթե դա անում է հավասարակշռված ու ճշգրիտ կերպով:
   գ. Հովվի կարծիքը: Այս կարծիքը կարող է լցված լինել Աստծո իմաստությամբ, կամ էլ հակառակը՝ այս կարծիքը կարող է հեռու լինել այդ հարցի վերաբերյալ Աստծո տեսակետից:

1

Մենք պետք է ուշադիր լինենք, որպեսզի սովորենք ճիշտ գնահատել եկեղեցում մեր լսածները և կարողանանք զանազանել Աստծո ճշմարտությունը մարդկային կարծիքից: Նորմալ է, եթե ինչ-որ մեկի կարծիքի հետ համաձայն չլինենք, սակայն պետք է ուշադիր լինենք, որ կարողանանք տարբերել աստվածայինը մարդկային կարծիքից և հնազանդվենք Աստծո ճշմարտությանը:

Այս դասաժամին սույն նյութերը ներկայացնելիս մենք պետք է հետևողական լինենք, որ այն չվերածվի քննարկման այն առումով, թե ինչպես է Աստված մեզ հետ խոսում մեր կյանքի տարբեր ասպարեզներում: Սա չափազանց ընդարձակ թեմա է, որի բոլոր հարցերին հնարավոր չէ անդրադառնալ այս դասաժամի ընթացքում: Մեր նպատակն է՝ կենտրոնանալ այն բանի վրա, թե ինչպես լսենք Աստծո ձայնը եկեղեցու համատեքստում:

Անհրաժեշտ է նշել, որ եկեղեցին ավելի մեծ է քան բուն եկեղեցական պաշտամունքը: Կիրակնօրյա պաշտամունքից բացի, Աստված կարող է մեզ հետ խոսել նաև եկեղեցական տարբեր ծառայությունների միջոցով:

Ամփոփի՛ր այս կետը՝ շեշտադրելով հավասարակշռության դերն այս հարցում: Մենք պետք է ակնկալենք, որ Աստված խոսելու է մեզ հետ, սակայն չպետք է չափազանց շատ կախված լինենք մարդկանցից՝ որպես թե միայն նրանց միջոցով կարող ենք լսել Տիրոջ ձայնը: Մենք կարիք ունենք սովորելու, թե ինչպես ստուգենք բոլոր՝ «Տիրոջից եկած խոսքերն» Աստվածաշնչի ուշադիր ուսումնասիրության տարբերակով: Անկախ այն բանից, թե որքան հոգևոր է հնչում ինչ-որ մեկի խորհուրդը, մենք պետք է տեսնենք, թե արդյո՞ք դա համապատասխանում է Աստվածաշնչում ասվածի հետ:

Եթե ինչ-որ մեկը մոտենա քեզ ու ասի. «Ես Տիրոջից խոսք ունեմ քեզ համար, այն է, որ դու պետք է այսինչ անձնավորության հետ ամուսնանաս», այս դեպքում ինչպե՞ս կարող ես իմանալ, թե արդյո՞ք նա այդ խոսքը Տիրոջից է ստացել: Եթե դու արդեն ամուսնացած ես, ապա անմիջապես կարող ես հասկանալ, որ դա Աստծուց չէ: Կարիք չկա, որ դու աղոթես և Աստծուն հարցնես, թե պե՞տք է ամուսնալուծվել և ամուսնանալ այս մյուս անձնավորության հետ, ում համար քեզ ասել էին՝ «Աստծուց ստացած խոսքով»:

Հավասարակշռությունն Աստծո հետ մտերիմ փոխհարաբերության բանալին է:

11. **Անցկացրո՛ւ Գ-4. կետը. «Մենք հավաքվում ենք մեկտեղ՝ օգնելու մեկս մյուսին»** (5-7 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 10-րդ էջ:

Չորրորդ պատճառը, թե ինչու ենք մենք մասնակցում տեղական եկեղեցուն, դա որպես մի հնարավորություն օգտագործելն է, որտեղ մենք կարող ենք օգնել միմյանց և օգնություն ստանալ միմյանցից: Մենք չենք գալիս եկեղեցի՝ ընդամենը պաշտամունքներին մասնակցելու և տուն գնալու համար: Աստված ուզում է, որ եկեղեցին լինի մի վայր, որտեղ մենք կարող ենք օգնել միմյանց:

Շատ անգամ նորահավատներն իրենց օտար են զգում եկեղեցում: Նրանք իրենց կապված չեն զգում մյուս հավատացյալների հետ: Այդ խնդիրը լուծելու ձևերից մեկը մյուսներին օգնելու հնարավորություն փնտրելն է:

Դրա ձևերից է նաև հովվին հարցնելը. «Ի՞նչ կարող եմ ես անել մյուսներին օգնելու համար: Ես ուզում եմ ներգրավվել մարդկանց օգնելու գործում»:

Միևնույն ժամանակ դու պետք է հարցնես Աստծուն. «Աստվա՛ծ իմ, ո՞ր հարցում ես Դու ուզում, որ ես մարդկանց օգնելու համար ներգրավվեմ»: Սա չի նշանակում, որ դու պետք է հատուկ նշան ստանաս՝ նախքան կսկսես մի լավ բան անել: Այստեղ կարևորն այն է, որ մենք ակնկալենք, որ Աստված դուռ կբացի, թե ինչի մեջ է Նա ուզում, որ մենք ներգրավվենք, և կփակի այն դուռը, որտեղ նա չէր ցանկանա, որ մենք ներգրավվեինք:

Քո ուսանողների համար շեշտի՛ր, որ տեղական եկեղեցու մաս կազմել նշանակում է՝ ներգրավվել մյուսներին օգնելու մեջ: Սա ըստ ընտրության չէ, այլ պահանջ է: Սա ընդամենը մի քանի գերաստղերի համար չէ, քանի որ Աստված ամեն մեկիս համար էլ գործ ունի, որ անենք:

Մենք պետք է անցնենք մեր եսասիրական ցանկություններից այն կողմ և, տեսնելով մարդկանց կարիքները, հարցնենք Աստծուն, թե ինչպես կարող ենք ներգրավվել նրանց օգնելու՝ Աստծո գործընթացի մեջ:

12. **Անձնական կիրառություն** (5-10 րոպե):

Քաջալերի՛ր քո ուսանողներին, որպեսզի անձնական կիրառությունն ուղղակի կիրառեն իրենց տեղական եկեղեցու հանդեպ: Թող նրանք նորից նայեն Գ. կետը. «Ինչպե՞ս կարող եմ վայելել եկեղեցին»: Թող նրանք գնահատեն, թե դրանցից որը (որոնք) կարիք ունեն ավելի լայն կիրառել իրենց կյանքում: Նաև թող գրեն հատուկ նպատակներ, թե ինչ են անելու եկող շաբաթ:

1

Եթե այս դասընթացը ուսուցանվում է Թին Չելենջի կենտրոնի ծրագրում, անձնական կիրառությունը կենտրոնացրո՛ւ այս երեք հանգամանքների վրա.

Ա. Շեշտի՛ր, որ նրանց համար կարևոր է նպատակ դնել՝ ընտրել մի եկեղեցի, ուր նրանք կմասնակցեն ծրագիրն ավարտելուց հետո:

Բ. Քաջալերի՛ր նրանց՝ կիրառել այս չորս կետերն այն եկեղեցում, որտեղ նրանք մասնակցում են հենց այն պահին, քանի դեռ ծրագրի մեջ են: Նրանք չեն կարողանա ամբողջությամբ կիրառել այս չորս կետերը, սակայն քաջալերի՛ր նրանց, որպեսզի կարողացածի չափով անեն հենց հիմա:

Գ. Նաև քաջալերի՛ր նրանց՝ կիրառել այս չորս կետերը այն անձանց հանդեպ, ում հետ ապրում են այժմ՝ ծրագրում եղած ժամանակ: Օգնի՛ր նրանց տեսնել, որ եկեղեցին ընդամենը կիրակնօրյա պաշտամունք չի, այլ հաղորդակցություն է մյուս ճշմարիտ քրիստոնյաների հետ:

13. Հանձնարարություններ:

Ա. Եթե դեռ չես արել, այսօր բաժանի՛ր Ուսանողի ձեռնարկը: Թող նրանք կարդան երկրորդ գլուխը՝ «Ինչպե՞ս վկայություն տալ»՝ հաջորդ դասաժամին նախապատրաստվելու համար:

Բ. Գնահատակա՛ն դիր Ուսանողի ձեռնարկ, Նախագիծ 2-րդի համար՝ «Սահմանում»:

Գ. Ուսանողի ձեռնարկ, Նախագիծ 4-րդի համար՝ «Բ Կորնթացիներին 9:7», գնահատական չի դրվելու մինչև 4-րդ դասաժամը: Բայց և այնպես, դու կարող ես քաջալերել քո ուսանողներին, որ անմիջապես սկսեն այս նախագիծը, քանի որ դա կարող է նրանց օգնել Նախագիծ 2-րդի վրա աշխատելիս, երբ գրելու լինեն իրենց անձնական վկայությունը: Բացատրի՛ր, որ Նախագիծ 4-րդի նպատակն ուսանողներին գաղափարներ տալն է, որպեսզի հիշեն աստվածաշնչյան հատուկ համարներ, որոնք նրանք անձնապես կիրառել են իրենց առօրյայում:

14. Դասի գնահատում:

Խնդրում եմ՝ գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:
Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:
Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվարհասկանալի:
Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

Դասի ծրագիր 2.
Ինչպես վկայություն տալ

1. **Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն:**

Երբ ես վկայություն եմ տալիս, ես կիսվում եմ մարդկանց հետ նրանով, թե ինչպես է Աստված ինձ օգնում աճել:

2. **Բանալի համար. Եփեսացիներին 4:29.**

«Երբեք ձեր բերանից ապականող խոսակցություն թող դուրս չգա, այլ՝ ինչը շինության համար բարի ու պիտանի է, որպեսզի լսողներին շնորհով լցնի»:

3. **Հղում ուսանողական նյութերին:**

Ուսանողի ձեռնարկի 2-րդ գլուխը համընթաց է այս դասի հետ: Ուսանողի ձեռնարկ, Նախագիծ 1-ինը նույնպես կօգտագործվի այստեղ:

4. **Դասի ջերմացման գործողություն** (5-7 րոպե):

Այսօրվա դասը սկսի՛ր խնդրելով, որ մեկ կամ երկու կամավորներ կիսվեն, թե ինչպես է մեկ ուրիշի վկայությունն իրենց կյանքի վրա ազդեցություն թողել: Դու սա կարող ես նախօրոք պայմանավորվել, որպեսզի իմանաս, թե ովքեր են այս դասաժամին կիսվելու իրենց կյանքի օրինակով:

Եթե ինչ-որ մեկը ճշմարիտ քրիստոնյա է դարձել պատանի կամ չափահաս տարիքում, կարող է վերհիշել այն ազդեցությունը, որն ինչ-որ մեկի վկայության հետևանքով կրել է իր վրա, երբ մինչ այդ համոզվել էր, որ անհրաժեշտ է ճշմարիտ քրիստոնյա դառնալ:

5. **Անցկացրո՛ւ Ա. կետը. «Ի՞նչ է վկայությունը»** (5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 11-րդ:

Նախքան Ուսանողի ձեռնարկի նյութը քննարկելը խնդրի՛ր ուսանողներին՝ կիսվել «վկայություն» բառի իրենց սահմանումներով: Հորդորի՛ր նրանց՝ հղում անել իրենց մտքերին, որոնք գրել են Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 1-ինում:

2

Իրենց մտքերով կիսվելուց հետո ուսանողները թող բացեն Ուսանողի ձեռնարկի 11-րդ էջը և համառոտ քննարկեն վկայության սահմանումը, որը մենք օգտագործելու ենք այս դասին: Դու կարող ես դուրս գրել հետևյալ սահմանումը մի մեծ ստվարաթղթի վրա և փակցնել դասասենյակի պատին.

> Վկայություն նշանակում է՝ «Կիսվել մարդկանց հետ, թե ինչ է արել աՔրիստոսը քո կյանքում»:
>
> *Մեջբերումն արված է Ուսանողի ձեռնարկի 10-րդ էջից:*

6. Անցկացրո՛ւ Բ. կետը. «Ինչո՞ւ ես պետք է վկայեմ»
(5-10 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 11-րդ:

Արագ անցի՛ր Ուսանողի ձեռնարկում նշված վեց կետերով՝ բացատրելով, թե ինչո՛ւ նրանք պետք է իրենց վկայությունով կիսվելու պատրաստ և պատրաստակամ լինեն:

> ## Բ. Ինչո՞ւ ես պետք է վկայեմ
>
> 1. Դա ինձ հնարավորություն է տալիս հնազանդվել Քրիստոսին (Մատթեոս 28:19-20)
> 2. Դա ինձ հնարավորություն է տալիս ամրացնել իմ հավատը և վստահությունն Աստծո հանդեպ: Դա ինձ օգնում է ավելի ուժեղ քրիստոնյա լինել
> 3. Դա ինձ հնարավորություն է տալիս բացահայտ դավանել Աստծուն (Գործք. 5:29)
> 4. Դա ինձ հնարավորություն է տալիս օգնել մյուսներին: Դա կարող է մարդկանց օգնել, որպեսզի Աստծուն ներգրավեն իրենց կյանքում
> 5. Դա ինձ հնարավորություն է տալիս փառավորել Աստծուն, որպեսզի Նա մեծարվի իմ կյանքի փոփոխությունների համար
> 6. Դա ինձ հնարավորություն է տալիս հաղթել սատանային (Հայտ. 12:11)
>
> *Մեջբերումն արված է Ուսանողի ձեռնարկից, էջ 11-րդ:*

Այս բոլոր կետերով անցնելուց հետո դու կարող ես մի քանի րոպե հատկացնել՝ քննարկելու համար տարբեր հնարավորություններ, որոնք նրանք ունեն իրենց վկայությամբ կիսվելու համար: Խնդրի՛ր նրանց, որ օգնեն քեզ՝ ցուցակագրել դրանք: Ահա մի քանի մտքեր, որոնք նախկին

ուսուցիչներն ու ուսանողներն են տվել: Թող սկզբում քո ուսանողներն իրենց մտքերով կիսվեն, իսկ հետո նրանց բերած մտքերին կարող ես ավելացնել նաև ստորև նշված ցուցակից:

Ո՞ւմ հետ կարող ես կիսվել քո վկայությամբ.

1. Եկեղեցու:
2. Քո ընտանիքի
   (եթե դու նրանց հետ չես ապրում, արա՛ սա անձնական այցերի, հեռախոսազանգերի կամ նամակ գրելու միջոցով):
3. Քո կողքին ապրող մարդկանց (հատկապես՝ նորեկների):
4. Սենյակակիցների:
5. Խմբային ժողովների մասնակիցների:
6. Ճաշի ժամանակ:
7. Ազատ ժամանակ:

7. Անցկացրո՛ւ Գ. կետը. «Լավ վկայության հիմնական հատկանիշները» (15-20 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 12-13-րդ էջեր:

Այս կետի քննարկման սկզբում պարզաբանի՛ր *վկայության* և *կյանքի վկայության* տարբերությունը: Մենք այս դասաժամին ավելի ուշ կքննարկենք *կյանքի վկայությունը*: Ասա՛ նրանց, որ պետք է տարբեր հնարավորություններ փնտրեն՝ շաբաթվա ընթացքում իրենց վկայությամբ կիսվելու համար:

Հատկապես նորադարձ քրիստոնյաներից շատերին անհրաժեշտ է կիսվելու նոր թեմաներ գտնել՝ իրենց հին մեղսալից կյանքի մասին շարունակ խոսելու փոխարեն: Իրենց հոգևոր աճի համար կարևոր է՝ այս շաբաթվա ընթացքում հնարավորություններ փնտրել խոսելու այն մասին, թե ինչ է Աստված անում իրենց կյանքում:

Ներկայացրո՛ւ լավ վկայության այն չորս կետերը, որոնք գրված են Ուսանողի ձեռնարկի 12-րդ էջում: Վկայություն տալու այս մոդելը նկարագրելու համար դու պետք է պատրաստ լինես՝ ներկայացնել երկու կամ երեք հստակ օրինակներ: Դրանք պետք է լինեն այնպիսի վկայություններ, որոնք հեշտությամբ հասկանալի կլինեն ուսանողներին՝ կախված նրանց տարիքից ու հոգևոր հասունությունից:

2

Լավ վկայության չորս հիմնական բաժինները

1. Պատմի՛ր քո կյանքի մի ասպարեզի մասին, որտեղ Աստված քեզ օգնում է աճել
2. Հիշեցրո՛ւ Աստվածաշնչյան մի համար, որը քեզ օգնել է աճել այդ ասպարեզում: Եթե անգիր գիտես այդ համարը, արտասանի՛ր այն: Հակառակ դեպքում՝ այն կարդա՛ Աստվածաշնչից
3. Պատմի՛ր, թե ինչպես ես դու օգտագործել այդ համարը քո կյանքի տվյալ ասպարեզում քեզ օգնելու համար: Մի՛ քարոզիր: Բացատրի՛ր պարզ, գործնական ձևով, թե ինչպես է այդ համարը քեզ օգնել: Նկարագրի՛ր, թե ինչ կապ ունի այդ համարը քո կյանքի այն ասպարեզի հետ, որտեղ Աստված օգնել է քեզ աճել
4. Վերջին մի քանի օրերից կոնկրետ օրինա՛կ բեր, թե ինչպես ես դու այդ համարն օգտագործել: Աստծո՛ւն տուր փառքը, որ քեզ օգնել է աճել

Մեջբերումն արվել է Ուսանողի ձեռնարկից, էջ 12-րդ:

Դու կարող ես պլակատ պատրաստել այս չորս հիմնական կետերի վերաբերմամբ և այսօրվա քննարկման համար փակցնել դասասենյակում:

Քո ուսանողներին բացատրի՛ր՝ վկայություն տալիս կարևոր է, որ այն փառք բերի Աստծուն, ոչ թե մարդկանց ուշադրությունը գրավի քեզ վրա: Մենք սա չենք անում մարդկանց զբաղեցնելու համար: Եթե սա պատշաճ ձևով անենք, այն կարող է օգնել մյուսներին և քաջալերանք հանդիսանալ նրանց համար: Երբ նրանք կիսվում են իրենց վկայությամբ, դա չպետք է վերածվի քարոզչության:

Նրանց վկայության ամենակարևոր մասը հստակ օրինակ բերելն է, թե ինչպես է Աստված օգնում աճել իրենց կյանքի տվյալ ասպարեզում:

Լավ կլինի քո ուսանողներին դասարանում վկայությամբ կիսվելու հնարավորություն տալ՝ հիմնված այն չորս հիմնական կետերի վրա, որոնք գրված են Ուսանողի ձեռնարկի 12-րդ էջում: Մյուս ուսանողները թող գնահատեն, թե ինչքանով նրանք կարողացան հետևել նշված չորս կետերին: Բայց զգո՛ւյշ եղիր, որ սա չդառնա վկայություն տվողին իրենց քննադատությամբ նվաստացնելու առիթ:

Դու կարող ես սա կազմակերպել նաև այս նույն դասընթացին՝ ավելի ուշ, երբ նրանք լրացրած կլինեն Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 2-րդը, որտեղ նրանցից պահանջվում է վկայություն գրել:

Քո ուսանողներից ոմանց համար կարող է դժվար լինել՝ հիշել կոնկրետ ասպարեզներ, որտեղ Աստված նրանց օգնել է աճել: Ուսանողի ձեռնարկի 13-րդ էջերում կա *Կյանքից կյանք սովորելու պատկերը*, որը գործնական ռազմավարություն է առաջարկում, թե ինչպես գտնել իրական կյանքի իրավիճակներ՝ վկայության մեջ օգտագործելու համար:

Ժամանա՛կ հատկացրու՝ քննարկելու համար այս աղյուսակը և բե՛ր երկու կամ երեք օրինակ, երբ ինչ-որ մարդիկ օգտագործել են սա, որ գտնեն, թե որ ասպարեզներում է Աստված իրենց օգնել:

8. Անցկացրո՛ւ Դ. կետը. «Լրացուցիչ օգնություն»
(5-10 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 13-14-րդ էջ:

Արագ անցի՛ր այս հատվածում նշված բոլոր չորս կետերով: Քաջալերի՛ր քո ուսանողներին, որ գրեն իրենց վկայությունը՝ այն կապելով 2-րդ կետի հետ:

Դ. Լրացուցիչ օգնություն

1. Քո վկայությունը թող լինի հինգ րոպեից պակաս
2. Ծրագրի՛ր, թե ինչ ես ասելու քո վկայության մեջ
3. Այնպե՛ս արա, որ քո ողջ վկայությունն Աստծուն փառք բերի
4. Սուրբ Հոգուն խնդրի՛ր, որ օգնի քեզ՝ ճիշտ բաներ ասել

Մեջբերումն արված է Ուսանողի ձեռնարկից, 13-14-րդ էջ:

Վերջին երկու կետերը չեն կարող անտեսվել, եթե ուզում ենք մարդկանց հետ լավագույն ձևով կիսվել մեր վկայությամբ: Նաև քաջալերի՛ր, որ խուսափեն «լռելու» մեղքից: Սատանան կփորձի նրանց հասցնել մի աստիճանի, որպեսզի ոչինչ չասեն: Այս հարցում վախը կարող է դառնալ նրա գործիքը՝ մեզ լուռ պահելու համար: Մենք պետք է մեր վկայությամբ կիսվելու հնարավորություններ փնտրենք և կտեսնենք, որ Աստված օգնում է մեզ՝ այդ վախը հաղթահարելիս:

2

9. Անցկացրո՛ւ Ե. կետը. «Տալ սեփական կյանքի վկայությունը»
(5-10 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 14-15-րդ էջ:

Մատնանշի՛ր, որ *կյանքի վկայությունը* քո ողջ կյանքի վկայությունը չէ: Կյանքի պատմությունն ինքնակենսագրություն է: Քո ուսանողներին ասա՛, որ գիրք գրեն, եթե ցանկանում են, որ մարդիկ իմանան իրենց կյանքի ողջ պատմությունը:

Համառոտ անցի՛ր այս հատվածում նշված բոլոր չորս կետերով: Ուսանողի ձեռնարկը լրացուցիչ մեկնաբանություններ է տալիս կյանքի վկայության այս չորս կետերի վերաբերյալ:

Շատ անգամ Թին Չելենջում ուսանողները իրենց կյանքի վկայությամբ կիսվելու հնարավորություն են ունենում, երբ այցելում են եկեղեցիներ: Քո ուսանողների համար ընդգծի՛ր իրենց վկայությունը հստակ պահելու կարևորությունը: Նրանք բոլոր մեղսալից բաները, որ արել են անցյալում, պատմելու կարիք չունեն: Նրանք պետք է ընդամենը մեկ կոնկրետ օրինակ բերեն իրենց մեղսալից անցյալից և բացատրեն, թե ինչպես է դա իրենց կյանքում ցավ ու վնաս բերել:

Նրանք կարիք ունեն ժամանակը գոնե հավասարաչափ բաշխել, կամ ավելի շատ պատմել, թե ինչպես հասան այն կետին, երբ ընդունեցին Քրիստոսին իրենց կյանք, և ինչ փոփոխություններ տեղի ունեցան դրանից հետո:

Նրանց կյանքի վկայությունը պետք է ներառի նաև առնվազն մեկ համար Աստվածաշնչից, որն օգնել է նրանց՝ աճել Հիսուսի հետ ունեցած իրենց փոխհարաբերության մեջ:

Հորդորի՛ր քո ուսանողներին՝ գրել իրենց կյանքի վկայությունը:

Ե. Տալ սեփական կյանքի վկայությունը

1. Պատմի՛ր մեղքի հետևանքների մասին
2. Պատմի՛ր, թե ինչպես ես դու հասել այդտեղ և դարձել ճշմարիտ քրիստոնյա
3. Պատմի՛ր, թե ինչպես է քո կյանքը փոխվել ճշմարիտ քրիստոնյա դառնալուց ի վեր
4. Պատմի՛ր նրանց քո ապագա ծրագրերի ու նպատակների մասին

Մեջբերումն արված է Ուսանողի ձեռնարկից, 14-15-րդ էջ:

10. **Անձնական կիրառություն** (5-10 րոպե):

Այսօրվա անձնական կիրառության համար քաջալերի՛ր ուսանողներին, որ վկայություն տան եկեղեցում, տնային փոքր խմբում կամ մեկ այլ անձնավորության մոտ: Հորդորի՛ր նրանց՝ սա անել հաջորդ մի քանի օրվա ընթացքում, ոչ թե ամիսներ անց:

11. **Հանձնարարություններ:**

Ա. Դասաժամի վերջում հարցաշա՛ր տուր Եփեսացիներին 4:29-ի վերաբերյալ:

Բ. Հանձնարարի՛ր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 2-ը՝ «Իմ վկայությունը», և Նախագիծ 3-ը՝ « Լինել Աստծո տնտես», որոնք պետք է ավարտած լինեն մինչև հաջորդ դասաժամը:

Գ. Թող քո ուսանողները կարդան Ուսանողի ձեռնարկի 3-րդ գլուխը՝ հաջորդ դասաժամին նախապատրաստվելու համար:

Դ. Մեր հաջորդ դասաժամն Աստծո համար տնտես լինելու մասին է: Հարցրո՛ւ, թե արդյոք դասարանում կա՞ն մարդիկ, որոնք աշխատել են կամ ներկայումս աշխատում են որպես մենեջեր որևէ բիզնեսում: Խնդրի՛ր նրանց՝ դասից հետո խոսել քեզ հետ, և բացատրի՛ր, թե ինչպես ես ուզում նրանց հետ հարցազրույց անցկացնել հաջորդ դասաժամի սկզբում:

12. **Դասի գնահատում:**

Խնդրում եմ՝ գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:
Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:
Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվարհասկանալի:
Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

3

Դասի ծրագիր 3.
Ինչպես լինել Աստծո տնտես

1. **Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն:**

Որպես Աստծո տնտես՝ ես պետք է առավելագույնն անեմ իմ բոլոր գործերի մեջ:

2. **Բանալի համար. Հռոմեացիներին 12:11.**

«Գործի մեջ ծույլ մի՛ լինեք, հոգով ջերմեռա՛նդ եղեք, Տիրո՛ջը ծառայեցեք»:

3. **Հղում ուսանողական նյութերին:**

Ուսանողի ձեռնարկի 3-րդ գլուխը համընթաց է այս դասի հետ: Ուսանողի ձեռնարկ, Նախագիծ 3-րդը՝ «Լինել Աստծո տնտես», նույնպես կօգտագործվի այստեղ:

4. **Դասի ջերմացման գործողություն** (5-7 րոպե):

Դասն սկսի՛ր ներքևում նշված գործողություններից մեկով: Դու կարող ես կամ հարցազրույց անցկացնել մի անձնավորության հետ (գործողություն Ա.), կամ էլ երկու ուսանողների խնդրել՝ ժամանակակից ձևով դերակատարում անել «Թանկարժեք մարգարիտը» առակի վերաբերյալ:

Կախված այն բանից, թե ինչպես են ծրագրում այս դասաժամը, դու կարող ես երկու գործողություններն էլ օգտագործել այսօրվա դասաժամին:

Ա. Հարցազրույց հավատացյալ մենեջերի հետ:

Դասի սկզբում հարցազրո՛ւյց տար մի անձնավորության հետ, ով որևէ բիզնեսում աշխատում է կամ աշխատել է որպես մենեջեր: Կան երկու տարբերակներ, որոնք դու կարող ես հաշվի առնել այդ հարցազրույցի շրջանակներում:

Տարբերակ 1. Հարցրո՛ւ, կա՞ն քո ուսանողների մեջ մարդիկ, որոնք աշխատել են որպես մենեջեր որևէ բիզնեսում: Ընտրի՛ր մի կամավոր, խնդրի՛ր նրան՝ գալ դասարանի առաջ, և հարցազրո՛ւյց անցկացրու նրա հետ՝ օգտագործելով ներքևում եղած հարցերը: Վստահ լինելու համար, որ այդպիսի անձնավորություն դասարանում կա, լավ կլինի՝ նախօրոք՝ մինչև դասի սկսվելը ճշտել դա:

Տարբերակ 2. Պայմանավորվի՛ր մի անձնավորության հետ, ով որևէ բիզնեսում աշխատում է կամ աշխատել է որպես մենեջեր: Խնդրի՛ր նրան՝ գալ դասարան, և հարցազրո՛ւյց անցկացրու նրա հետ: Դու կարող ես նաև տեսաձայնագրել այդ հարցազրույցը և այն ցուցադրել քո դասարանում:

Հարցազրույցի համար առաջարկվող հարցեր.

1. Որտե՞ղ ես աշխատել որպես մենեջեր և որքա՞ն ժամանակ:
2. Ի՞նչ պահանջներ ներկայացվեցին քեզ՝ մենեջեր աշխատելու համար:
3. Քանի՞ մարդ կար քո ենթակայության տակ:
4. Ի՞նչ տարբերություններ կային քո աշխատանքային պարտականությունների և քո ենթակայության տակ գտնվող մարդկանց պարտականությունների միջև:
5. Ո՞րն է մենեջերի և գործատուի (սեփականատիրոջ) հիմնական տարբերությունը:
6. Ի՞նչ փոխհարաբերություններ ունեն մենեջերն ու գործատուն (սեփականատերը):
7. Ի՞նչ հնարավորություններ ես դու ունեցել աշխատավայրում, որպեսզի գործնականում ցույց տաս Հիսուսի հետ ունեցած քո փոխհարաբերությունը:

Բ. Ներկայացում. «Թանկարժեք մարգարիտը»:

Ընտրի՛ր երկու ուսանողների, որ տեքստը կարդան դերերով:

Քրիստոսի պատմած «Թանկարժեք մարգարիտը» առակի ժամանակակից տարբերակը:*

Գնորդի խոսքերը սովորական տառերով են, **իսկ վաճառողինը՝ մգեցված:**

«Ես ուզում եմ գնել այս մարգարիտը: Ի՞նչ արժե այն»:

«Դե՛հ,- ասում է վաճառողը,- այն շատ թանկ է»:

«Բայց որքա՞ն»,- հարցնում է գնորդը:

«Դեհ, շա՛տ, շա՛տ մեծ գումար»:

«Ձեր կարծիքով, ես կարո՞ղ եմ այն գնել»:

«Իհա՛րկե, բոլորն էլ կարող են այն գնել»:

«Բայց չէ՞ որ Դուք ասացիք, որ այն շատ թանկ է»:

«Այո»:

«Դե լավ, որքա՞ն արժե այն»:

«Ձեր ամբողջ ունեցածը»,- ասում է վաճառողը:

Գնորդը մի պահ հաշվարկում է և ասում. «Շատ լավ, ես կգնեմ այն: Ես տասը հազար դոլար ունեմ բանկում»:

«Տաս հազար դոլա՞ր: Լավ: Ուրիշ ի՞նչ»:

«Դա է իմ ամբողջ ունեցածը: Հա, մի քանի դոլար էլ գրպանումս կա»:

3

«Որքա՞ն»:

Գնորդը սկսում է քրքրել իր գրպանները: «Տեսնենք… երեսուն, քառասուն, վաթսուն, յոթանասուն, հարյուր, հարյուր քսան դոլար»:

«Շատ լավ է: Ուրիշ ի՞նչ ունես դու»:

«Դե՛հ, երևի այսքանը: Ուրիշ ոչինչ»:

«Որտե՞ղ ես դու ապրում»,- նա դեռ շարունակում է փորփրել:

«Իմ տանը: Այո՛, ես տուն ունեմ»:

«Ուրեմն՝ տունը նույնպես»,- և գրի է առնում դա:

«Դու նկատի ունես, որ ես պետք է ապրեմ իմ ավտոտնակո՞ւմ»:

«Դու ավտոտնա՞կ ունես: Ուրեմն՝ դա էլ: Ուրիշ ի՞նչ ունես»:

«Ի՛նչ է, իմ մեքենայո՞ւմ պիտի քնեմ»:

«Դու մեքենա՞ ունես»:

«Երկուսը»:

«Երկուսն էլ իմն են դառնում: Ուրի՞շ ինչ»:

«Դե՛հ, իմ տունը, փողը, ավտոտնակն ու մեքենաները քոնն են: Ուրիշ ի՞նչ ես ուզում»:

«Դու մենա՞կ ես ապրում»:

«Ոչ, ես ունեմ կին և երկու երեխաներ…»:

«Օ՛, ուրեմն կինդ ու երեխաներդ՝ նույնպես: Ուրի՞շ ինչ»:

«Ես ուրիշ ոչինչ չունեմ: Հիմա միայն ես մնացի»:

Հանկարծ վաճառողը բացականչում է. «Օ՛, քիչ էր մնացել մոռանայի: Դու՝ նույնպես: Ամեն բան դառնում է իմը. կինը, երեխաները, տունը, փողը, մեքենաները և դու՝ նույնպես»: Հետո նա շարունակում է. «Հիմա լսի՛ր, ես քեզ թույլ կտամ այս բոլորն օգտագործել ժամանակավորապես: Սակայն չմոռանաս, որ դրանք իմն են, ինչպես՝ դու ինքդ էլ: Եվ երբ ես դրանց կարիքն ունենամ, դու պետք է դրանք տաս ինձ, որովհետև հիմա ես եմ սեփականատերը»:

Աղբյուրը՝ *Disciple*, հեղինակ՝ Juan Carlos Ortiz, (Wheaton, IL: Creation House, 1975) p 34-35, Մեջբերումն արված է՝ Improving Your Serve, by Charles R. Swindoll, p 35-36:

5. Քննարկի՛ր Ա. կետը. «Ի՞նչ է տնտեսը»
(5-10 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 16-17-րդ էջ:

Այսօրվա թեման սկսի՛ր՝ քննարկելով Ա. կետը՝ «Ի՞նչ է տնտեսը»: Սույն դասի վերջում մենք ուզում ենք համոզվել, որ մեր ուսանողները հասկանում են, թե ինչ է նշանակում Աստծո տնտես լինել: Նույնիսկ հավատացյալների մեջ տարածված չէ այս ձևով նկարագրել Աստծո հետ իրենց փոխհարաբերությունը: Հաճախ մենք լսում ենք Աստծուն սիրելու և հնազանդվելու կարևորության մասին և այլն:

Ուրեմն, երբ մենք խոսում ենք Աստծո տնտես լինելու մասին, ի՞նչ ենք հատկապես ուզում փոխանցել մեր ուսանողներին: Մենք ուզում ենք, որ նրանք տեսնեն տնտեսի (մենեջերի) և սեփականատիրոջ միջև եղած տարբերությունը, որպեսզի սկսեն իրենք իրենց նայել ոչ թե որպես ունեցածի սեփականատերը, այլ տնտեսն այն ամենի, ինչ Աստված տվել է նրանց: Սա կապված է թե՛ մտածելակերպի, թե՛ վարվեցողության հետ:

Մատնանշի՛ր, որ ճշմարիտ քրիստոնյա լինելն ավելին է, քան ընդամենը Հիսուսից մեղքերի թողություն խնդրելը: Աստված մեզնից ավելին է ակնկալում, քան ընդամենը մինչև կյանքի վերջը կիրակի օրերին եկեղեցի գնալը: Մենք պարտավորություն ունենք շաբաթվա 7 օրն ապրել Հիսուսի համար:

Լինել ճշմարիտ քրիստոնյա՝ նշանակում է, որ ես իմ կյանքը տվել եմ Հիսուսին: Նա է հիմա իմ անձի Սեփականատերն ու Տերը, իսկ ես աշխատում եմ Նրա մոտ: նա ինձ պատասխանատվություն է տվել Իր տնտեսը լինելու այն ամենի համար, ինչ Նա վստահել է ինձ:

Գործարար աշխարհում մենեջերը միայն այն ժամանակ է մենեջեր, երբ «աշխատավայրում աշխատում է»: Երբ գնում է տուն, նա ուրիշ պատասխանատվություններ է ստանձնում որպես ծնող, կողակից, եղբայր, քույր և այլն: Սակայն Աստծո տնտես լինելը շաբաթը 7 օր և օրը 24 ժամ է: Աստծո դեպքում մենք միշտ «գործի ենք». մենք մշտապես ունենք պատասխանատվություն՝ Աստծո համար լավ տնտես լինելու:

6. Քննարկե՛ք Բ. կետը. «Ի՞նչ է Աստված ինձ տվել, որ տնօրինեմ»
(7-10 բոպե), Ուսանողի ձեռնարկ, 17-18-րդ էջեր:

Համառոտ քննարկի՛ր, թե ինչ է Աստված մեզ տվել տնօրինելու: Խուսափի՛ր մանրամասն քննարկումից, թե ինչպես լինել Աստծո լավ տնտես՝ ըստ այս թեմաներից յուրաքանչյուրի: Մենք դրան կանդրադառնանք Դ. Կետում՝ «Ինչպե՞ս կարող եմ ցույց տալ, որ Աստծո համար լավ տնտես եմ»:

3

Բ. Ի՞նչ է Աստված ինձ տվել, որ տնօրինեմ

1. Ժամանակ
2. Փող
3. Սուրբ Հոգու պարգևներ
4. Ընտանիք և փոխհարաբերություններ
5. Աշխատանք

Մեջբերումն արված է Ուսանողի ձեռնարկից, էջ 17-18:

Այս կետում մենք ուզում ենք, որ մեր ուսանողներն ընկալեն, որ իրենց կյանքի տարբեր ասպարեզներում իրենք ունեն որոշակի «լծակներ», որտեղ Աստված ուզում է՝ նրանք տեսնեն, որ Աստծուց տրված պատասխանատվություններ ունեն: Նրանք պետք է իրենք իրենց որպես տնտեսներ տեսնեն այդ ասպարեզներից յուրաքանչյուրում:

Դու կարող ես ընդարձակել Ուսանողի ձեռնարկում տրված ցուցակը: Կարող ես այդ ցուցակը գրել պլակատի վրա, դա փակցնել դասասենյակի պատին և դասաժամի ընթացքում հղում անել դրան:

Հորդորի՛ր նրանց՝ խորհել, թե ինչպես կարող են Աստծո լավ տնտես լինել հենց այդ պահին, քանի դեռ դասարանում են: Խնդրի՛ր նրանց, որ բացատրեն, թե ինչպես կարող են դա անել:

Ինչպե՞ս կարող ես իմանալ, թե ինչ է Աստված քեզ տվել, որ տնօրինես: Նա է ասում քեզ այդ մասին: Նա դրանք կոչում է պատասխանատվություններ: Պատասխանատվությունները կանոններ են, որոնք տրված են քեզ, գործողություններ, որոնք դու պետք է անես:

Ազատությունը կամ առավելությունը մի բան է, որը տրվել է քեզ, և որը դու կարող ես չանել, եթե չես ուզում: Օրինակ, քո տնեցիներին, քո ծնողներին նամակ գրելու, հեռախոսով զանգահարելու հարցում դու ազատ ես: Պատասխանատվությունները, սակայն, այլ բան են:

Որո՞նք են ամենամեծ պատասխանատվությունները, որ Աստված տալիս է քեզ: Սիրել Աստծուն (Մարկոս 12:30): Նկատի՛ր, թե որն է քո պատասխանատվությունը. սիրելը: Նկատի՛ր, թե ում է նա ամենից առավել ուղղված. Աստծուն: Քո մեծագույն պատասխանատվությունը ոչ թե ինքդ քեզ կամ ուրիշին սիրելն է, այլ՝ Աստծուն:

Որպես ուսանողի՝ ի՞նչ պատասխանատվություն է Աստված քեզ տվել: Մի հարց, որին դու հանդիպում ես, սա է՝ «Ի՞նչ պետք է ես անեմ սովորելու համար»: Առաջարկվող պատասխաններն են.

Ուշադրություն դարձնել:

Լսել:

Դասերին մասնակցել:

Հարցեր տալ:

Նշումներ անել:

Սովորել (դասից դուրս):

Վերանայել:

Աստվածաշնչյան ուսուցումները կապել կյանքի հետ:

Հարցրո՛ւ քո ուսանողներին, թե ինչպես կարող են ցույց տալ Աստծուն, որ սիրում են Նրան՝ դասարանում դասը լսելով: Թող նրանք մեկ րոպե ուշադիր լսեն դասը, իսկ հետո բացատրի՛ր, թե ինչ արեցին նրանք: Նրանք դասը լսելով ցույց տվեցին իրենց սերն Աստծո հանդեպ:

Դու կարող ես ավելի արագ մտածել, քան մարդիկ կհասցնեն խոսել: Այնպես որ, երբ դու դասարանում լսում ես, կարող ես միաժամանակ մտածել ավելին, քան այն բառերը լսելը, որոնք ասում է ուսուցիչը: Մտածել, դրանով իսկ ցույց կտաս քո սերն Աստծո հանդեպ:

Ինչպե՞ս կարելի է լսելը կապել Աստծուն սիրելու հետ:

«Գործի մեջ ծույլ մի՛ լինեք» (Հռոմեացիներին 12:11):

«Եվ ինչ-որ անեք, սրտա՛նց արեք» (Կողոսացիներին 3:23):

Մտածելը նույնպես գործ է: Այն մտքի ակտիվ աշխատանք է:

Լսելը կարող է պասիվ լինել, եթե դու պարզապես նստես ու ականջներով բառեր լսես: Սակայն եթե ուզում ես լսելդ քեզ օգնի Աստծու հանդեպ քո սերը ցույց տալու համար, ապա այդ լսելը պետք է ակտիվ լինի:

Դասարանում լսելու ժամանակ քո միտքն ակտիվորեն օգտագործելու լավագույն տարբերակը մտածելն է, թե ինչպես կարող ես օգտագործել այն, ինչը քեզ սովորեցնում են (այսինքն՝ կիրառես քո լսածը): Ինչպե՞ս կարող ես դա օգտագործել Աստծո հետ քո փոխհարաբերության մեջ: Այնուհետև, ինչպե՞ս կարող ես օգտագործել այն, ինչը սովորում ես մյուս ուսանողների հետ քո փոխհարաբերություններում:

Մի բան, որը կարող է քեզ օգնել, քո անձնական կիրառման վերաբերյալ մտքերը գրի առնելն է, երբ մտածում ես դրանց մասին: Առաջնայնությունը պետք է տրվի այն բանին, թե ինչպես գտնել աստվածաշնչյան համարները

օգտագործելու ձևեր, համարներ, որոնք դիտարկվել են դասարանում: Քո լսելու որակը կարևոր հանգամանքներից մեկն է, որպեսզի կարողանաս իմաստալից ինչ-որ բան սովորել դասի ժամանակ:

Ջերմեռանդորեն լսի՛ր. Տե՛ս Բ Կորնթացիներին 8:11:

7. **Քննարկի՛ր Գ. կետը. «Ի՞նչն է մարդուն դարձնում լավ տնտես Աստծո համար»** (10-15 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 18-20-րդ էջեր:

Քննարկե՛ք 6 բնութագրիչները, որոնք թվարկված են Ուսանողի ձեռնարկում, և որոնք նկարագրում են, թե ինչն է մարդուն դարձնում Աստծո լավ տնտես: Դու կարող ես դա կապել այն բանի հետ, որով արդեն կիսվել եք դասի սկզբում՝ բացման հարցազրույցի ժամանակ: Ինչքանո՞վ են նման կամ տարբեր՝ Աստծո լավ տնտես լինելու հետևյալ բնութագրիչները բիզնեսի ոլորտում լավ մենեջեր լինելու պահանջների հետ համեմատած:

Գ. Ի՞նչն է մարդուն դարձնում լավ տնտես Աստծո համար

1. Հավասարակշռված աճը
2. Լավ տնտեսը սովորում է բաշխել պատասխանատվությունները
3. Աստված է իմ Տերն ու իմ Առաջնորդը
4. Սերը շատ մեծ տեղ ունի Աստծո համար գերազանց տնտես լինելու մեջ
5. Հավատարմություն
6. Հնազանդություն

Մեջբերումն արված է Ուսանողի ձեռնարկից, 18-20 –րդ էջեր:

Աստծո լավ տնտես լինելու այս վեց հատկանիշները քննարկելուց հետո դու կարող ես քո ուսանողներին հանձնարարել, որ քննարկեն իրենց պատասխանները, որոնք տվել են Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 3-րդի՝ «Լինել Աստծո տնտես», 10-րդ հարցին:

Կարդա՛ Ղուկաս 12:42-48 հատվածի պատմությունը: Ի՞նչը լավ ծառայի աշխատանքի մեջ դուր եկավ տիրոջը:

8. **Քննարկե՛ք Դ. կետը. «Ինչպե՞ս կարող եմ ցույց տալ, որ Աստծո համար լավ տնտես եմ»** (7-10 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 20-22-րդ էջեր:

Այս հատվածը մեզ բերում է անձնական կիրառության մակարդակի: Այստեղ մեր նպատակն է, որ ուսանողները սկսեն անձնականացնել այն հնարավորությունները, որոնք այսօր Աստված դնում է նրանց դիմաց: Այստեղ միայն երեք բաների մասին ենք քննարկում. իմ ժամանակը, իմ աշխատանքը և իմ ունեցվածքը:

Սույն կետը կապ ունի Բ. կետի հետ՝ «Ի՞նչ է Աստված ինձ տվել, որ տնօրինեմ», որտեղ ուրիշ բաներ էլ են թվարկված: Հնարավոր է՝ դու ժամանակ չունենաս այս բոլոր ասպարեզները մանրամասնորեն քննարկելու համար, սակայն մատնանշի՛ր, որ կարիք կա դրանցից յուրաքանչյուրի շուրջ խորը մտածելու և հստակ նպատակներ դնելու, թե ինչպես կարող ես դառնալ Աստծո լավ տնտես:

Ջա՛նք արա՝ իրար հետ կապել այն բոլոր թեմաները, որոնց շուրջ մենք խոսել ենք այսօր: Այնպե՛ս արա, որ նրանք տեսնեն, թե ինչ կարող են այսօր սկսել անել Աստծո լավ տնտես դառնալու համար:

«Իմ ժամանակը» թեման քննարկելիս առաջարկի՛ր քննարկել հետևյալ արտահայտությունը. «Եթե միայն ես ավելի շատ ժամանակ ունենայի, ավելի շատ բան կկարողանայի անել»:

Իրականում շատ ժամանակը չի օգնի: Եթե դու քո տնօրինության տակ ավելի շատ ժամանակ ունենայիր, արդյո՞ք քո ժամանակն օգտագործելու որակն ավելի լավը կդառնար: Աստծո սկզբունքն այսպիսին է. եթե դու հավատարիմ ես քչի մեջ, Նա քեզ ավելին կտա:

Քո ժամանակը. Ինչպե՞ս կարող ես լավագույնս օգտագործել այն: Ժամանակդ դասավորի՛ր ըստ առաջնահերթությունների և կարևորությունների:

Եփեսացիներին 5:16.

«Ժամանակը ծախո՛ւ առեք, որովհետև օրերը չար են»:

«Աշխատանք» թեման քննարկելիս ընդգծի՛ր, որ նրանք դա կարող են կիրառել, նույնիսկ եթե դեռևս աշխատանք չունեն: Կարող են կիրառել՝ կապված տնային գործերի հետ այն վայրում, որտեղ նրանք ապրում են: Կամ էլ կարող են կիրառել անձնական ոլորտում, երբ որպես կամավոր՝ աշխատանքային որոշակի հանձնարարություններ են ստանում:

9. Քննարկի՛ր Ե. կետը. «Իմ վերաբերմունքն է ցույց տալիս, թե արդյո՞ք ես գործում եմ որպես Աստծո տնտես»
(5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 22-23-րդ էջեր:

Օգնի՛ր քո ուսանողներին՝ տեսնել, որ այսօրվա իրենց ձևավորած վերաբերմունքն է ազդելու իրենց մնացած ողջ կյանքի վրա: Աստծո տնտես լինելն իր էությամբ վերաբերմունքի հարց է: Նրանց մտածելակերպն է որոշելու, թե որքանով կհաջողվի այս հարցը դարձնել իրենց կենսակերպի անբաժանելի մասը:

Քո վերաբերմունքից է կախված՝ ներկայումս դու վարվո՞ւմ ես Աստծո տնտեսի պես, թե՞ ոչ:

Քննարկի՛ր Հռոմեացիներին 12:11-ը և Կողոսացիներին 3:23-ը և դրանց կապը քո վերաբերմունքի հետ: Մատնանշի՛ր, որ շատ անգամ մեր եսասիրությունը կարող է լինել մեծագույն արգելք՝ Տիրոջ համար մեր գործի ճանապարհին:

3

10. **Քննարկի՛ր Զ. կետը. «Աստծո տնտես լինելու արդյունքները»** (5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 23-րդ էջ:

Հնարավոր է՝ դու արդեն անդրադարձել ես այս հարցին այսօրվա դասի ընթացքում: Օգտագործի՛ր այս կետը՝ հիմնական կետերը ամբողջացնելու համար, որոնք քննարկել եք այսօրվա դասին: Օգնի՛ր նրանց, որ տեսնեն հատկապես սովորելու ուժը, թե ինչպես դառնալ Աստծո լավ տնտես. Նա ավելի շատ պատասխանատվություններ կտա քեզ: Լավագույն ճանապարհը, որ տեսնենք, որ Աստված նոր դռներ է բացում մեզ համար, Աստծուն հավատարիմ լինելն է այնտեղ, որտեղ Նա մեզ դրել է այսօր:

11. **Անձնական կիրառություն** (10 րոպե):

Ա. «Աստծո տնտես» լինել դասարանում:

Անձնական կիրառությունը կենտրոնացրո՛ւ դասարանում Աստծո համար տնտես լինելու վրա: Վերանայե՛ք այն ամենը, ինչը Աստված նրանց տվել է տնօրինելու համար, որոնք ուղղակիորեն կապ ունեն այս դասաժամի հետ: Բե՛ր մի քանի պատկերավոր օրինակներ՝ դա հասկանալի դարձնելու համար: Ուսանողներին հանձնարարի՛ր, որ գրեն այն, ինչը կարող են անել հաջորդ դասաժամին, և ինչը ցույց կտա, որ նրանք Աստծո լավ տնտեսներ են:

Նաև քաջալերի՛ր նրանց, որ գտնեն իրենց առօրյա կյանքում մի ասպարեզ, որտեղ ուզում են փորձել լինել Աստծո լավ տնտես: Թող նրանք մի նպատակ դնեն, որը կարող են անել հաջորդ երկու օրվա ընթացքում, որով էլ կարող են սկսել Աստծո համար լավ տնտես լինել:

Բ. «Աստծո տնտես» լինել քո փողի հարցում:

Եթե քո ուսանողները ներկայումս եկամուտ ունեն, քաջալերի՛ր նրանց, որ առնվազն 10% տան Աստծուն՝ որպես տասանորդ:

12. Հանձնարարություններ:

Ա. Տո՛ւր հարցաշար Բ Կորնթացիներին 9:7-ի վերաբերյալ դասի վերջում:

Բ. Գնահատակա՛ն դիր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 2-րդի՝ «Իմ վկայությունը», և Նախագիծ 3-րդի՝ «Լինել Աստծո տնտես» բաժինների համար:

Գ. Թող քո ուսանողները կարդան Ուսանողի Ձեռնարկի 4-րդ գլուխը՝ հաջորդ դասաժամին նախապատրաստվելու համար:

Դ . Հանձնարարի՛ր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 5-րդի՝ «Իմ գործը»՝ որպես այսօրվա մեր դասը գնահատելու միջոց: Քաջալերի՛ր նրանց, որ փնտրեն միջոցներ՝ իրենց աշխատանքային ժամանակը որպես հնարավորություն օգտագործելու համար, նաև կիրառելու համար այն, ինչը մենք սովորեցինք այսօր:

13. Դասի գնահատում:

Խնդրում եմ՝ գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:
Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:
Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվարհասկանալի:
Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

3

Դասի ծրագիր 4.
Հաղորդություն

4

1. **Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն:**

Հաղորդության ժողովը դառնում է աճի ժողով, երբ ես մտածում եմ այս ժողովը կազմակերպելու՝ Աստծո պատճառների մասին:

2. **Բանալի համար. Գործք 2:42.**

«Եվ նրանք հաստատորեն շարունակում էին առաքյալների ուսմունքի, հաղորդակցության և հաց կտրելու և աղոթքի մեջ»:

3. **Հղում ուսանողական նյութերին:**

Ուսանողի ձեռնարկի 4-րդ գլուխը համընթաց է այս դասի հետ:

4. **Դասի ջերմացման գործողություն:**

Դու այս դասի համար լավ սկզբի կարիք ունես, այլապես այս դասն ուսանողների համար կարող է այնքան ձանձրալի լինել, որ նրանք ոչ մի հետաքրքրություն չցուցաբերեն: Ներքևում երկու տարբերակներ են:

Ա. «Քրիստոսի չարչարանքները» ֆիլմը:

Քանի որ այս դասն ամբողջությամբ կենտրոնանում է Քրիստոսի մահվան իմաստի վրա, դու կարող ես քո դասն սկսել՝ մի քանի առանձին հատվածներ ցույց տալով «Քրիստոսի չարչարանքները» ֆիլմից: Ֆիլմում նրա ծեծվելու հատվածն է, որն իրոք ցույց է տալիս, թե ինչպես է Քրիստոսը մեզ համար տառապում,:

Մեկ այլ տարբերակ է քո ուսանողների հետ պայմանավորվելը, որ նրանք ֆիլմն ամբողջությամբ նայեն դասի նախորդ օրը:

Բ. Հաղորդության ցուցադրում Power Point ծրագրով:

Դու կարող ես Power Point-ով ստեղծել մի ցուցադրություն՝ հաղորդության որոշ տեսարաններով: Եթե որոշես այդպես անել, ուրեմն պետք է կողմնորոշվես, թե արդյո՞ք դա պետք է լինի քո «դասի ջերմացման գործողությունը», թե՞ դու կցանկանաս այն օգտագործել դասը պատմելու ողջ ընթացքում: Ահա մի քանի տարբերակներ.

1. Ցույց տալ, թե ներկայումս ինչպես է հաղորդության ծառայությունն անցկացվում եկեղեցում:

2. Ցույց տալ հաղորդության ծառայությանը մասնակցող երեխաների նկարներ և խնդրել քո ուսանողներին՝ կիսվել իրենց հիշողություններով, թե ինչպես են առաջին անգամ մասնակցել հաղորդության ծառայությանը:

3. Ցո՛ւյց տուր Հիսուսի խոցված ու արնաշաղախ ձեռքերը:

5. Անցկացրո՛ւ Ա. կետը. «Ի՞նչ է նշանակում «հաղորդություն» (5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 24-րդ էջ:

Դասի քննարկումն սկսի՛ր՝ քո ուսանողներին խնդրելով սահմանել «հաղորդություն» բառը: Գրի՛ր նրանց պատասխանները գրատախտակի վրա: Նորմալ է, եթե նրանք մի քանի տարբեր սահմանումներ տան:

Նրանց սահմանումները գրելուց հետո մատնանշի՛ր, որ եկեղեցական ծառայությունների մեջ այն առանձնահատուկ տեղ ունի:
Ուսանողի ձեռնարկի 24-րդ էջում մի քանի տերմիններ կան թվարկված, որոնք օգտագործվում են այս եկեղեցական առանձնահատուկ ծառայությունը բնութագրելու համար: Նշի՛ր, որ տարբեր եկեղեցիներ տարբեր անուններ են օգտագործում, ինչպես նաև տարբեր ձևերով են կազմակերպում այս առանձնահատուկ ծառայությունը:

Մի՛ խորացիր քննարկման մեջ՝ փորձելով պարզաբանել տարբեր եկեղեցիների անցկացման ձևերը: Պարզապես ասա՛, որ դրանք տարբեր են, և դա նորմալ է:

Նաև մատնանշի՛ր, որ «հաղորդություն» բառն ունի ընդհանրական սահմանում՝ «կիսվել»: Ընդգծի՛ր, որ այս սահմանումը շատ կարևոր է եկեղեցական հատուկ ծառայության նպատակը հասկանալու համար: Մենք այս հարցն ավելի մանրամասն կքննարկենք այսօրվա դասաժամին:

Խուսափի՛ր մտնել այնպիսի քննարկումների մեջ, թե արդյո՞ք հացն ու գինին, իրոք, վերածվում են Հիսուսի արյան ու մարմնի: Սա մեր այսօրվա դասի հիմնական թեման չէ, նաև դա այն թեման չէ, որի վրա նորադարձ քրիստոնյաներն արժե, որ կենտրոնանան: Հղո՛ւմ արա Աստվածաշնչյան բանալի ճշմարտությանն՝ այս դասի նպատակի համար:

6. Անցկացրո՛ւ Բ. կետը. «Ի՞նչ հատուկ բաներ են օգտագործվում հաղորդության ծառայության ժամանակ» (3-5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 25-րդ էջեր:

Մատնանշի՛ր, թե ինչով է տարբերվում հաղորդության ծառայությունը եկեղեցական մյուս ծառայություններից: Որպես այս ծառայության կենտրոնական մաս՝ օգտագործվում է սնունդ:

4

Քո ուսանողներին բացատրի՛ր, որ անմիջապես Իր մահից առաջ էր, երբ առաջին անգամ Հիսուսը սա կատարեց Իր աշակերտների համար: Հիսուսն Իր աշակերտների հետ տոնում էր Զատիկը, որը հրեական շատ յուրահատուկ կրոնական հիշատակման օր է: Զատկին ուտում էին հատուկ ուտելիքներ, որոնք կոչված էին հիշեցնելու, թե ինչպես Աստված պաշտպանեց հրեաներին այն գիշերը, երբ մահվան հրեշտակն անցնում էր Եգիպտոսով և սպանում էր բոլոր ընտանիքների առաջնեկ տղաներին: Սա Հիսուսի ժամանակվա հրեաների ամենասուրբ տոնն էր, որի ժամանակ ուտում էին այնպիսի ուտելիքներ, որոնցից ամեն մեկը հատուկ հոգևոր խորհուրդ ուներ:

4

Հիսուսի արածը նոր իմաստ հաղորդեց հրեական այդ հին ավանդույթին: Նա վերցրեց այդ օրերի համար ամենասովորական համարվող ուտելիքներ՝ հաց ու գինի, և նոր իմաստ հաղորդեց դրանց:

Հիսուսն Իր աշակերտներին նաև ասաց, որ դա անեին Իր և նրանց համար՝ Իր արածը վերհիշելու նպատակով: Տե՛ս Ղուկաս 22:7-23:

Հիսուսը նրանց ասաց, որ հացը խորհրդապատկերում է Իր մարմինը, որը Նա տալիս էր նրանց համար. մեր փրկության համար: Տե՛ս Ղուկաս 22:19:

Հիսուսը նրանց ասաց, որ գինին խորհրդապատկերում է Իր արյունը, որը Նա տալիս էր մեր փրկության համար: Տե՛ս Ղուկաս 22:20:

Այս նույն խորհրդապատկերները բացատրվում են Կորնթացիների եկեղեցուն, որտեղ Պողոս առաքյալը ցուցումներ է տալիս, թե ինչպես անցկացնեն հաղորդության ծառայությունը: Տե՛ս Ա Կորնթացիներին 11:17-34: Այս համարը կլինի քննարկման հիմնական թեման այսօրվա դասաժամի մնացած ընթացքում:

7. Անցկացրո՛ւ Գ. կետը. «Ինչո՞ւ ենք մենք հաց և գինի օգտագործում հաղորդության ծառայության ժամանակ»
(5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 25-րդ էջ:

Ուսանողներին ասա՛, որ կրոնական առաջնորդները չեն որոշել հաց ու գինի օգտագործել, այլ Հիսուսն Ինքն է տվել այդ ցուցումները: Աստված էր մանրամասնորեն ցուցումներ տվել, թե ինչպես պետք է նաև Զատկի տոնը կատարվեր Հին Կտակարանի ժամանակներում:

Հացն ու գինին ֆիզիկական խորհուրդներ են, որոնց մենք կարող ենք դիպչել, համտեսել և ուտել՝ ի հիշատակ այն բանի, թե ինչ արեց Հիսուսը մեզ համար: Հիսուսն ուզում էր վստահ լինել, որ մենք չենք մոռանա այն հիասքանչ զոհաբերությունը, որ Նա արեց մեզ համար:

Եթե որպես քո դասի ջերմացման գործողություն դու դեռ չես օգտագործել, ապա այս կետում կարող ես քո ուսանողներին ցույց տալ մի քանի ընտրված հատվածներ «Քրիստոսի չարչարանքները» ֆիլմից: Մենք խորհուրդ կտանք հատկապես դիտել Հիսուսի ծեծվելու տեսարանը: Այս տեսողական հզոր պատկերները կարող են օգնել հաղորդության իմաստը ավելի իրական պատկերացնելու համար: Իսկ եթե դու արդեն օգտագործել ես այս տեսանյութը դասի սկզբում, ապա կարող ես պարզապես հիշեցնել, թե ինչ են նրանք տեսել:

8. Անցկացրո՛ւ Դ. կետը. «Ինչո՞ւ ենք մենք հաղորդություն անում» (15-20 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 25-26-րդ էջ:

4

Դասաժամի մեծ մասն անցկացրո՛ւ՝ քննարկելու համար, թե ինչու է մեզ անհրաժեշտ հաղորդության ծառայությունը: Թող ուսանողները կարդան Ա Կորնթացիներին 11:23-24 -ը և բացահայտեն այն 5 կետերը, որոնք բացատրում են, թե ինչու մենք ունենք այս ծառայությունը: Տե՛ս Ուսանողի ձեռնարկի 25-26-րդ էջն այս տեղեկության համար:

Դ. Ինչո՞ւ ենք մենք հաղորդություն անում:

1. Պաշտենք Աստծուն (Ա Կորնթացիներին 11:24-26)
2. Հիշենք, որ Հիսուսը մահացել է մեզ համար (Ա Կորնթացիներին 11:24-25)
3. Հիշեցնենք մեզ, որ սպասենք Հիսուսի երկրորդ գալուստին (Ա Կորնթացիներին 11:26)
4. Մեզ հնարավորություն տանք՝ նայելու մեր ներսը (քննելու մեր կյանքը) (Ա Կորնթացիներին 11:27-32)
   - ա. Խոստովանենք մեր մեղքերն Աստծուն
   - բ. Տեսնենք, թե արդյո՞ք հասել ենք մեր նպատակներին
5. Օգնենք մեզ, որ նայենք մարդկանց հետ ունեցած մեր փոխհարաբերություններին (Ա Կորնթացիներին 11:29)
   - ա. Ներողություն խնդրենք, եթե ինչ-որ մեկին վիրավորել ենք կամ վնաս տվել
   - բ. Քաջալերենք միմյանց
   - գ. Շնորհակալություն հայտնենք մարդկանց մեր հանդեպ արած լավ բանի համար:

Մեջբերումը կատարված է Ուսանողի ձեռնարկից, 26-27-րդ էջ:

4-րդ կետը քննարկելիս ժամանա՛կ հատկացրու՝ մեր կյանքում մեղքի մասին և հաղորդության մասին խոսելու համար: Մենք պետք է զգույշ լինենք, որպեսզի սա չվերածենք եկեղեցական աստվածաբանության քննարկման: Շատ եկեղեցիներ հավատում են, որ հաղորդությունը չի ներում մարդու մեղքերը: Այն ընդամենը խորհրդապատկերում է, թե ինչ է արել Հիսուսը մեր մեղքերի համար:

Ճիշտ այնպես, ինչպես ջրի մկրտությունը չի լվանում մարդու մեղքերը, այնպես էլ՝ հաղորդությունը:

4

Ընդգծի՛ր այն պատճառները, թե ինչու Հիսուսը սկիզբ դրեց կրոնական այս պրակտիկային:

Մարդկանց անհանգստացնող մեկ այլ հարց էլ կա. ի՞նչ կլինի, եթե ոչ ճշմարիտ քրիստոնյաները մասնակցեն հաղորդությանը: Նույնիսկ որոշ ճշմարիտ քրիստոնյաներ երկյուղածությամբ են մոտենում հաղորդություն վերցնելուն՝ մտածելով, որ դրանով կարող է Աստծո դատաստանը գալ իրենց վրա:

Ա Կորնթացիներին 11-րդ գլխի վերջին հատվածը խոսում է Կորնթոսի եկեղեցում եղած մի քանի խնդիրների մասին: Սակայն հաղորդության հետ կապված պարզ ճշմարտությունն այս է. եթե դու ճշմարիտ քրիստոնյա ես, ապա սա կարող է հիասքանչ միջոց լինել, որպեսզի Աստծուն ցույց տաս, որ դու սիրում ես Նրան: Եթե դու ճշմարիտ քրիստոնյա չես, ապա հաղորդության մասնակցությունը ոչինչ չի անի քո մեղքերի թողության համար: Դու հաղորդությունից հետո էլ կմնաս նույն մեղավորը, ինչպես դրանից առաջ էիր:

Ընդգծի՛ր, որ մեղքերի ներումը գալիս է դրանք Հիսուսին խոստովանելով: Նա է մեզ մաքրազատում մեր մեղքերից, այլ ոչ թե մեր արածները, լինեն դրանք հաղորդություն, ջրի մկրտություն կամ եկեղեցական ժողովների մասնակցություն:

Դասի այս հատվածը շեշտադրման արժանի է այն իմաստով, որ այն մեզ հիշեցնում է «Քրիստոսի մարմնի» կարևորության մասին: Սա չի վերաբերում Նրա ֆիզիկական մարմնին, երբ Նա երկրի վրա էր, այլ խորհրդապատկերում է այն մարդկանց, ովքեր ճշմարիտ քրիստոնյաներ են:

9. Անձնական կիրառություն (5-10 րոպե):

Անձնական կիրառությունը կենտրոնացրո՛ւ հաղորդության գոյության հինգ պատճառների վրա:

1. Ասա՛ ուսանողներին, որ այդ հինգ պատճառներն արտագրեն իրենց Աստվածաշնչի կազմի ներսի կողմում:

2. Հիշեցրո՛ւ նրանց, որ երբ իրենց եկեղեցում մասնակցելիս լինեն հաղորդության ծառայությանը, վերանայեն այդ պատճառները, որպեսզի առավելագույնս օգտվեն այդ ծառայությունից:

3. Մտածի՛ր այդ պատճառների մասին ամեն անգամ, երբ եկեղեցում կլինես:

10. Հանձնարարություններ:

Ա. Տո՛ւր հարցաշար Կողոսացիներին 3:23-ի վերաբերյալ դասի վերջում:

Բ. Գնահատակա՛ն դիր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 4-րդի՝ «Բ Կորնթացիներին 9:7», և Նախագիծ 5-րդի՝ «Իմ գործը» բաժինների համար:

Գ. Թող քո ուսանողները կարդան Ուսանողի ձեռնարկի 5-րդ գլուխը՝ «Ջրի մկրտություն»՝ հաջորդ դասին նախապատրաստվելու համար:

11. Դասի գնահատում:

Խնդրում եմ՝ գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:
Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:
Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվարհասկանալի:
Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

4

Դասի ծրագիր 5.
Ջրի մկրտություն

1. **Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն:**

Ջրի մկրտության ծառայությունն ինձ հնարավորություն է ընձեռում վերանայել Աստծո հետ ունեցած իմ փոխհարաբերությունը:

2. **Բանալի համար. Հռոմեացիներին 6:3.**

«Դուք չգիտե՞ք, թե մեզանից ովքեր Հիսուս Քրիստոսի մեջ մկրտվեցին, Նրա մահվանը մկրտվեցին»:

5

3. **Հղում ուսանողական նյութերին:**

Ուսանողի ձեռնարկի 5-րդ գլուխը համընթաց է այս դասի հետ: Ուսանողի ձեռնարկի Նախագիծ 6-րդը՝ «Ջրի մկրտություն», նույնպես կօգտագործվի այս դասին:

4. **Դասի ջերմացման գործողություն** (5 րոպե):

Այսօրվա դասը սկսելու համար կարող ես 1 կամ 2 ուսանողի խնդրել, որպեսզին պատմեն, թե երբ են ջրով մկրտվել, և թե ինչ նշանակություն է դա ունեցել նրանց համար:

5. **Ներկայացրու դասը** (5 րոպե):

Այսօրվա դասն սկսի՛ր Նոր Կտակարանում ջրի մկրտության համառոտ քննարկումով: Սա մի պրակտիկա էր, որ Հովհաննես Մկրտիչն անում էր նախքան Հիսուսը կսկսեր Իր հրապարակային ծառայությունը:
Տե՛ս՝ Մատթեոս 3-րդ գլուխ:

Մատթեոս 3-րդը նաև նկարագրում է, թե ինչպես Հիսուսն Ինքը ջրով մկրտվեց Հովհաննեսի կողմից. համարներ՝ 13-17-րդ:

Խնդրի՛ր քո ուսանողներին, որ կարծիք հայտնեն, թե ինչ իմաստ ուներ ջրի մկրտությունը Հովհաննես Մկրտչի ծառայության մեջ: Եթե նրանց պատասխանները ճշգրիտ կերպով բնութագրեն, թե ինչու էր Հովհաննեսը մկրտում մարդկանց, ապա ուղղակի անցի՛ր հաջորդ կետին:

Ջրով մկրտելու՝ Հովհաննեսի պատճառն արտաքին խորհուրդն էր այն բանի, որ տվյալ մարդը դարձել է ճշմարիտ հավատացյալ և Աստծո հետևորդ:

6. **Անցկացրո՛ւ Ա կետը. «Ջրի մկրտության հոգևոր իմաստը»**
(20-25 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 27-30-րդ էջեր:

Դասաժամի մեծ մասն անցկացրո՛ւ ջրի մկրտության հոգևոր իմաստը քննարկելու վրա: Ուսանողի ձեռնարկում տրված են հինգ պատճառներ: Որպես այս քննարկման հիմք՝ մենք կօգտագործենք աստվածաշնչյան երկու հատվածներ. Հռոմեացիներին 6:1-10 և Գաղատացիներին 2:20:

Մատնանշի՛ր, որ Հիսուսի մահից ու հարությունից հետո այս հոգևոր խորհրդին նոր իմաստ հաղորդվեց: Նաև նշի՛ր փրկության հոգևոր ակտի և փրկության հոգևոր խորհրդի՝ ջրի մկրտության միջև եղած տարբերությունը:

Քննարկե՛ք այս հինգ կետերից յուրաքանչյուրը՝ ցույց տալով, թե ինչպես է ջրի մկրտությունը խորհրդապատկերում դրանցից յուրաքանչյուրը՝ Հիսուսի հետ մեր փոխհարաբերության մեջ:

5

Ա. Ջրի մկրտության հոգևոր իմաստը

1. Ես մեկանում եմ Քրիստոսի հետ Նրա **խաչելության** մեջ (Հռոմեացիներին 6:6, Գաղատացիներին 2:20):
2. Ես մեկանում եմ Քրիստոսի հետ Նրա **մահվան** մեջ (Հռոմեացիներին 6:3):
3. Ես մեկանում եմ Քրիստոսի հետ Նրա **թաղման** մեջ (Հռոմեացիներին 6:4):
4. Ես մեկանում եմ Քրիստոսի հետ Նրա **հարության** մեջ (Հռոմեացիներին 6:4-5):
5. Ես մեկանում եմ Քրիստոսի հետ Նրա **նոր ապրելակերպի մեջ** (Գաղատացիներին 2:20):

Մեջբերումն արված է Ուսանողի ձեռնարկից, 27-30-րդ էջեր:

7. **Անցկացրո՛ւ Բ. կետը. «Ինչո՞ւ ես պետք է ջրով մկրտվեմ»**
(5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 30-րդ էջ:

Համոզվի՛ր, որ նրանք հասկանում են, որ ջրի մկրտությունն ընդամենը խորհուրդ է: Այն մարդու մեղքեր չի ներում: Բայց և այնպես, Աստվածաշունչն ուսուցանում է, որ մենք պետք է ջրով մկրտվենք ճշմարիտ քրիստոնյա դառնալուց հետո:

Համառոտ քննարկի՛ր Ուսանողի ձեռնարկում նշված երեք կետերը, թե ինչու մենք պետք է ջրով մկրտվենք:

Բ. Ինչո՞ւ ես պետք է ջրով մկրտվեմ

1. Դա Աստծուն հնազանդվելու ձև է (Մատթեոս 28:10-20)
2. Դա հրապարակային վկայություն է, որ ես դարձել եմ ճշմարիտ քրիստոնյա
3. Դա ևս մեկ քայլ է իմ հոգևոր աճի մեջ

Մեջբերումն արված է Ուսանողի ձեռնարկից, 30-րդ էջ:

5

8. Անցկացրո՛ւ Գ կետը. «Ե՞րբ ես պետք է ջրով մկրտվեմ»
(5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 30-րդ էջ:

Այս կետի ձեր քննարկումը կենտրոնացրե՛ք այն բանին, թե ինչ է ասում Աստվածաշունչը: Թող ուսանողները գտնեն ու կարդան աստվածաշնչյան այն հատվածները, որոնք խոսում են ջրի մկրտության մասին վաղ եկեղեցում. Գործք 2:38,41, Գործք 8:37-38, և Գործք 19:4-5:

Նշի՛ր, որ տարբեր եկեղեցիներ այս հարցի վերաբերյալ տարբեր սովորություններ ունեն: Որոշ եկեղեցիներ մարդկանց մկրտում են այն նույն օրը, երբ նրանք աղոթում են ճշմարիտ քրիստոնյա դառնալու համար: Մյուսները պահանջում են, որ նորադարձ քրիստոնյաները հատուկ դասեր անցնեն: Այլ եկեղեցիներ էլ տարիքային պահանջներ ունեն. անձը պետք է որոշակի տարիքի հասած լինի:

Եկեղեցիներ կան, որոնք ջրի մկրտությունը կապում են եկեղեցու անդամակցության հետ, այսինքն՝ ջրով մկրտվելով մարդը միաժամանակ միանում է եկեղեցուն:

Շեշտադրի՛ր ջրի մկրտության պարզ ճշմարտության կարևորությունը. սա հրապարակային խորհուրդ է առ այն, որ մարդը դարձել է ճշմարիտ քրիստոնյա:

9. Անցկացրո՛ւ Դ. կետը. «Ջրի մկրտության արդյունքները»
(5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 30-31-րդ:

Ջրի մկրտության արդյունքները քննարկելիս նորից շեշտադրի՛ր, որ ջրի մկրտությունը չի մաքրում քո մեղքերը: Սա խորհրդապատկերն է այն հոգևոր փոփոխության, որն արդեն տեղի է ունեցել քո կյանքում:

Ջրի մկրտության մասնակցության առաջնային օգուտը հրապարակայնորեն փոխանցելու մեր հնազանդությունն է, որ մենք մեր կյանքը տվել ենք Հիսուսին:

Լավ կլիներ մատնանշել, որ ջրով մկրտվելուց անմիջապես հետո Հիսուսն անցավ 40-օրյա մի ընթացքով, երբ Նա հանդիպեց սատանայի կողմից ուժեղ փորձությունների: Հնարավոր է՝ այսօր բոլոր նորադարձ հավատացյալների համար նույնը չլինի, բայց մենք չպետք է անակնկալի գանք, եթե ջրի մկրտությանը հաջորդող օրերին հանդիպենք մեղքի հետ կապված մեծ փորձությունների:

Համառոտ բացատրի՛ր, որ ջրի մկրտությունը չպետք է շփոթել Սուրբ Հոգու մկրտության հետ, որի մասին մենք ավելի մանրամասն քննարկում ենք *Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար*:

10. **Անձնական կիրառություն** (5-10 րոպե):

Անձնական կիրառությունը կենտրոնացրո՛ւ՝ համոզվելու համար, որ իրենց փոխհարաբերությունն Աստծո հետ ճիշտ վիճակում է: Հիսուսի հետ այս հոգևոր փոխհարաբերությունը շատ ավելի կարևոր է, քան ջրի մկրտությունը:

Եթե քո ուսանողներից կան մարդիկ, ովքեր ջրով դեռ չեն մկրտվել, դու կարող ես ջրի մկրտության ծառայություն կազմակերպել նրանց համար:

11. **Հանձնարարություններ:**

Ա. Գնահատակա՛ն դիր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 6-րդի՝ «Ջրի մկրտություն» բաժնի համար:

Բ. Թող քո ուսանողները կարդան Ուսանողի ձեռնարկի 6-րդ գլուխը՝ «Աղոթք»՝ հաջորդ դասին նախապատրաստվելու համար:

12. **Դասի գնահատում:**

Խնդրում եմ՝ գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:
Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:
Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվարհասկանալի:
Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

5

Դասի ծրագիր 6.
Աղոթք

1. **Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն:**

Հավատացյալները կարիք ունեն աղոթքը դարձնել իրենց ամեն օրվա իմաստալից մասը:

2. **Բանալի համար. Փիլիպպեցիներին 4:6.**

«Ոչ մի բանի մասին մի՛ մտահոգվեք, այլ թող ամեն բանում աղոթքով, աղաչանքով ու գոհությամբ՝ ձեր խնդրանքները հայտնի լինեն Աստծուն»:

3. **Հղում ուսանողական նյութերին:**

Ուսանողի ձեռնարկի 6-րդ գլուխը համընթաց է այս դասի հետ:

6

4. **Դասի ջերմացման գործողություն** (5 րոպե):

Ա. Հումորային աղոթք:

Այսօրվա դասը սկսելու համար դու կարող ես որոշ մարդկանց հումորային աղոթքի օրինակներ բերել: Կան շատ օրինակներ. երեխաներ, նորադարձ քրիստոնյաներ և այլն:

Բ. Գրեք աղոթք՝ փոքր խմբերով:

Թող քո ուսանողները բաժանվեն զույգերի, և խնդրե՛ք նրանց՝ Աստծուն ուղղված աղոթք գրել: Նրանց տո՛ւր մի իրավիճակ, որին կարող էին հանդիպել առօրյա գործունեության մեջ, որպեսզի դա օգտագործեն իրենց աղոթքի կենտրոնում:

Իրենց աղոթքը գրելուց հետո թող նրանցից մի քանիսը այն կարդան դասարանի համար: Մենք այնքան էլ չենք ուզում դատողություններ անել, թե որքան լավ են ստացվել նրանց աղոթքները: Դրա փոխարեն ցանկանում ենք նրանց մտածելու առիթ տալ, թե ինչ կարող են ներառել իրենց աղոթքի մեջ:

5. **Դու ես որոշում քո առաջնահերթություններն այսօրվա համար:**

Այս դասը կարևոր շատ տեղեկություններ է պարունակում աղոթքի վերաբերյալ: Դու պետք է գնահատես քո ուսանողների կարիքը և կողմնորոշվես, թե դրանցից որին ավելի շատ կարևորություն տաս դասի ընթացքում:

6. Անցկացրո՛ւ Ա. կետը. «Ի՞նչ է աղոթքը»
(5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 32-րդ էջ:

Այսօրվա դասն սկսի՛ր՝ ուսանողներին խնդրելով սահմանել, թե ինչ է աղոթքը:

Շեշտի՛ր, որ կարևոր է աղոթքը դարձնել երկկողմանի հաղորդակցություն: Բազմաթիվ նորադարձ հավատացյալների համար դժվար է «Աստծուն լսել իրենց աղոթքների մեջ», սակայն աղոթքն ավելին պետք է լինի, քան պարզապես Աստծուն ասելը, թե ինչ ենք ուզում, իսկ վերջում ասել՝ «Ամեն»:

Ուսանողի ձեռնարկը բազմաթիվ պատճառներ է տալիս այս թեմայի վերաբերյալ. «Ինչո՞ւ ես պետք է աղոթեմ»: Դու այս քննարկումը կարող ես սկսել՝ պարզապես խնդրելով պատասխանել հետևյալ հարցին. «Ինչո՞ւ ես պետք է աղոթեմ»:

Այս հատվածի երրորդ կետն է՝ «Ո՞ւմ պետք է ես աղոթեմ»: Մենք ուզում ենք սա հնարավորինս պարզ դարձնել. մենք աղոթում ենք Աստծուն: Շատ նորադարձ հավատացյալներ աղոթում են Հիսուսին, և դա նորմալ է, որովհետև Հիսուսն Աստված է: Մյուսներն աղոթում են Հայր Աստծուն: Եկե՛ք հասկանանք. Աստված չի կարևորում այսպիսի մանրամասնությունները՝ «Օ՜, դու պետք է աղոթես Սուրբ Հոգուն, եթե ուզում ես, որ քո աղոթքը պատասխան ունենա»:

Աստծո սերն անսահման է, և Նա սիրում է, երբ մենք աղոթում ենք Իրեն: Նա չի պատրաստվում երկնքում ծալել Իր ձեռքերը և ասել. «Ես չեմ պատասխանի այս աղոթքին, որովհետև դու սխալ բառեր օգտագործեցիր»: Մեր պաշտած Աստվածն այդպիսին չէ:

7. Անցկացրո՛ւ Բ. կետը. «Ինչպե՞ս պետք է աղոթեմ»
(5-10 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 33-34-րդ էջ:

Կախված քո ուսանողների հոգևոր հասունությունից՝ դու կարող ես այս հատվածն արագ անցկացնել և անցնել մյուս հարցերին: Սակայն մենք չպետք է այնպես համարենք, կարծես բոլորը հասկանում են այս թեմաները:

Այս չորս կետերը քննարկելիս դու նախապես պետք է ծանոթ լինես դասի մնացած մասին, որպեսզի հարցերն ուղղես դասի առավել համապատասխան հատվածներին:

Կենտրոնացումը պահի՛ր գործնական ու պարզ մակարդակի վրա: Մենք ուզում ենք, որ աղոթքը դառնա յուրաքանչյուրի կյանքի բնական մասը, ճիշտ՝ ինչպես շնչառությունը:

Հատկապես առաջին ենթակետը քննարկելիս օգտագործի՛ր առօրյա խոսակցական ոճը և քաջալերի՛ր նրանց, որպեսզի չտարվեն կրոնական ոճի հարցերով: Դու կարող ես հղում անել Հիսուսի պատմած պատմությանը՝ երկու աղոթող մարդկանց մասին, երբ քննարկելիս լինեք այս չորս կետերը: Տե՛ս Ղուկաս 18:9-14:

Բ. Ինչպե՞ս պետք է աղոթեմ:

1. Սովորական խոսակցական ձևով
2. Անկե՛ղծ եղիր Աստծո հետ
3. Կոնկրե՛տ եղիր թեմայի շուրջ
4. Քո մարմնի դիրքը կարևոր չէ

Մեջբերումն արված է Ուսանողի ձեռնարկից, էջ 33-34-րդ:

6

8. Անցկացրո՛ւ Գ. կետը. «Ի՞նչ պետք է ասեմ աղոթելիս»
(5-10 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 34-35-րդ էջեր:

Այս կետը վերաբերում է աղոթքի հետ կապված շատ հիմնավոր հանգամանքների: Մի՛ համարիր, որ այն, ինչը քեզ համար՝ որպես հասուն քրիստոնյայի, ակնհայտ է, նույնն է նաև քո ուսանողների համար:

Ընդգծի՛ր, որ կարևոր է սովորել, որ աղոթքն ավելին է, քան պարզապես Աստծուն ասելը, թե ինչ ենք ուզում: Համեմատության լավ կետ է ուսանողներին հարցնելը, թե ինչ են նրանք մտածում՝ ինչպիսին պետք է լինի ընկերը, և ինչ տեսակ խոսակցություն նրանք կցանկանային ունենալ այդպիսի ընկերոջ հետ:

Ինչպե՞ս դու կզգայիր քեզ, եթե այդ անձնավորությունը քեզ հետ խոսեր միայն այն ժամանակ, երբ քեզնից ինչ-որ բանի կարիք ունենար:

Ինչպե՞ս դու կզգայիր քեզ, եթե այդ անձնավորությունը ամեն անգամ քեզ հետ խոսելիս թույլ չտար, որ դու էլ խոսես, այլ պարզապես ասեր իր ասելիքն ու շրջվելով հեռանար:

Այս կետերից յուրաքանչյուրով անցնելիս թեմայի ուղղությունը պահի՛ր գործնականի վրա, որը կապ ունի իրենց առօրյա կյանքի հետ, ոչ թե միայն տեղի ունեցող խոշոր աղետների ու փորձանքների:

Գ. Ի՞նչ պետք է ասեմ աղոթելիս

1. Երկրպագի՛ր Աստծուն
2. Խնդրի՛ր Աստծուն, որ ների քո մեղքերը (Սաղմոս 66:2, Եսայի 59:2)։
3. Շնորհակալությո՛ւն հայտնիր Աստծուն (Ա Թեսաղոնիկեցիներին 5:18)։
4. Աղոթքով քո բոլոր խնդրանքները բե՛ր Աստծուն (Փիլիպպեցիներին 4:6)։
5. ղոթի՛ր այնպես, ինչպես Սուրբ Հոգին է քեզ առաջնորդում աղոթել ։ (Եփեսացիներին 6:18)։

Մեջբերումն արված է Ուսանողի ձեռնարկից, 34-35-րդ էջեր:

9. Անցկացրո՛ւ Դ. կետը. «Որո՞նք են աղոթելու օգուտները»
(5-7 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 36-38-րդ էջեր:

6

Դասի այս կետն արա՛գ անցիր: Շատ անգամ նորադարձ քրիստոնյաները դժվարանում են աղոթքը դարձնել իրենց կյանքի իմաստալից մասը: Այս օգուտները չեն գալիս մեկօրյա աղոթքից հետո, այլ՝ երբ աղոթքը դարձնում են իրենց առօրյայի անբաժան մասը:

Դ. Որո՞նք են աղոթելու օգուտները

1. Աղոթքը քեզ օգնում է ավելին բացահայտել քո երկնային Հոր մասին (Մատթեոս 6:9)։
2. Աղոթքը քեզ օգնում է Աստծուց օգնություն ստանալ կարիքի դեպքում (Եբրայեցիներին 4:16, Բ Կորնթացիներին 12:7-10-ը և Հակոբոս 1:2-8)։
3. Աղոթքն օգնում է Աստծո խաղաղությունն ու ազատությունը գտնել, երբ խնդիրների մեջ ենք (Փիլիպպեցիներին 4:6-7)։
4. Աղոթքն օգնում է ընդունել Սուրբ Հոգուն (Գործք 2-րդ գլուխ և Գործք 4:31, Ղուկաս 11:13)։
5. Աղոթքն օգնում է բացահայտել Աստծո կամքը քո կյանքի համար (Ղուկաս 22:41-43)։
6. Աղոթքն օգնում է պատրաստվել Հիսուսի գալստյանը (Ղուկաս 21:36)։

Մեջբերումն արված է Ուսանողի ձեռնարկից, 36-38-րդ էջեր:

10. Անցկացրո՛ւ Ե. կետը. «Ինչպե՞ս կարող եմ ստանալ իմ աղոթքների պատասխանները» (5-10 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 38-րդ էջ:

Այս միտքը կարող է ամենադժվարամարսը լինել նորադարձ հավատացյալների համար: Ճիշտ՝ ինչպես անտեսանելի մեկին աղոթելը շատերի համար դժվարըմբռնելի է: Սակայն ավելի մեծ հարց է Աստծուն լսելը՝ պատասխան ստանալը մեր աղոթքներին:

Մենք պետք է զգուշորեն ուսուցանենք, որ մեր հավատը չի հիմնվում կյանքի փորձի վրա, նույնիսկ՝ լավ դեպքերի: Մենք պետք է մեր ուսանողներին սովորեցնենք նայել, թե ինչ է Աստված ասում Աստվածաշնչում. սա պետք է լինի մեր հիմքը այս հարցին պատասխանելիս:

Անցկացրո՛ւ բոլոր ենթակետերն այստեղ: Ուշադի՛ր եղիր, որ հավասարակշռություն բերես այստեղ, որը որոշ հավատացյալներ չեն հասկանում: Ոմանք հավատում են, որ կան որոշակի բաներ, և եթե դրանք անեն, պատասխանը երաշխավորված է: «Աղոթի՛ր Հիսուսի անունով: Հատուկ բառե՛ր օգտագործիր: Մի՛ կասկածիր»:

Աղոթքը կախարդական փայտիկ չէ մեր ուզածները ստանալու համար: Մենք խոսում ենք ողջ տիեզերքի Աստծո հետ, և Նա հետաքրքրված է լսել, թե ինչ ունենք մենք Նրան ասելու:

Սակայն մենք մեր աղոթքներին կարող ենք ստանալ հետևյալ 3 պատասխաններից որևէ մեկը: Նա կարող է ասել՝ «Այո՛», «Ո՛չ» կամ «Սպասի՛ր»: Ինչ պատասխան էլ որ Նա տա, մենք ընդունելու անհրաժեշտություն ունենք:

Ե. Ինչպե՞ս կարող եմ ստանալ իմ աղոթքների պատասխանները

1. Ակնակալի՛ր, որ Աստված պատասխանելու է (Ա Հովհաննես 5:14-15, Հակոբոս 1:6-7):
2. Ընդունի՛ր Աստծո պատասխանը (Առակաց, 28:9, Բ Կորնթացիներին 12:7-10):

Մեջբերումն արված է Ուսանողի ձեռնարկից, էջ 38-րդ:

6

11. **Անցկացրո՛ւ Զ. կետը. «Ինչո՞ւ ես չեմ ստանում իմ աղոթքների պատասխանները»** (5-10 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 39-41-րդ էջեր:

Այս դասը կարող է շատ հարցեր առաջացնել: Հնարավոր է՝ քո ուսանողներից շատերը պայքարներ ունեն այս հարցում:

Շատ կարևոր է, որ դու նրանց օգնես այս հարցին պատասխանել Աստվածաշնչի հիման վրա, ոչ թե՝ անձնական փորձառության: Մենք նաև պետք է նրանց օգնենք հասկանալ, որ եթե մի անձնավորություն կոնկրետ պատասխան է ստացել, ինքնաբերաբար չի նշանակում, որ մենք էլ այդ նույն պատասխանը կստանանք:

Խնդրում եմ՝ հաշվի առ, որ այս կետում նշված ենթակետերը միակ պատճառները չեն, թե ինչու մարդը, հնարավոր է, չստանա իր աղոթքի պատասխանը: Դու և քո ուսանողները կարող եք ավելացնել այլ կարևոր մտքեր, որոնք խանգարում են մեզ՝ մեր աղոթքին պատասխան ստանալու համար:

Բ Թագավորաց 21-րդ գլուխը մեզ պատմում է Դավիթ թագավորի կյանքից մի դեպք, երբ նա բացահայտեց, թե ինչո՛ւ Աստված չէր պատասխանում իրենց աղոթքին, և ինչպես արձագանքեցին այդ հարցը լուծելու համար:

Այստեղ կարևոր է շեշտել, որ Աստված, իրոք, լսում է մեր աղոթքներն ու ուզում է պատասխանել դրանց: Շատ անգամ լինում են նախապայմաններ, որոնք մենք պետք է կատարենք, եթե ուզում ենք պատասխան ստանալ մեր աղոթքին: Սակայն մենք ստիպված չենք կատարյալ լինել Աստծո առաջ, որպեսզի Աստված պատասխանի մեր աղոթքներին:

Զ. Ինչո՞ւ ես չեմ ստանում իմ աղոթքների պատասխանները

1. Դու Աստծուց սխալ բա՞ն ես խնդրում (Հակոբոս 4:14-15, Հակոբոս 4:3):
2. Դու մեղքին կառչա՞ծ ես քո կյանքում (Սաղմոս 66:18, Առակաց 28:13):
3. Դու հրաժարվո՞ւմ ես Աստծուն լսել (Առակաց 28:9):
4. Որոշ աղոթքներ պայմանական են (Ա Հովհաննես 3:22-24):
5. Դու կասկածների մե՞ջ ես (Եբրայեցիներին 11:6, Հակոբոս 1:6-7):

Մեջբերումն արված է Ուսանողի ձեռնարկից, 39-41-րդ էջեր:

6

12. Անցկացրո՛ւ Է. կետը. «Ե՞րբ ես պետք է աղոթեմ»
(3-5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 41-42-րդ:

Սա շատ հիմնավոր կետ է: Քո ուսանողներին քաջալերի՛ր, որ փնտրեն տարբեր հնարավորություններ աղոթելու համար՝ թե՛ միայնակ, թե՛ ուրիշների հետ: Ընդգծի՛ր 2-րդ ենթակետի կարևորությունը՝ պարբերաբար աղոթելու համար:

Է. Ե՞րբ ես պետք է աղոթեմ

1. Երբեք մի՛ դադարիր (Ա Թեսաղոնիկեցիներին 5:17):
2. Պարբերաբար աղոթքի ժա՛մ ունեցիր
3. Խմբային աղոթք

Մեջբերումն արված է Ուսանողի ձեռնարկից, էջ 41-42-րդ:

6

13. Անցկացրո՛ւ Ը. կետը. «Ինչո՞ւ է աղոթքն այդքան դժվար»
(5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 42-44-րդ էջեր:

Այս հարցը նույնպես կարող է լուրջ մարտահրավեր լինել քո ուսանողների համար: Այստեղ կարևոր է շեշտադրել, որ նրանք չպետք է զարմանան, եթե աղոթելիս դժվարանան: Մենք կարող ենք սխալ եզրակացություններ անել, որ աղոթելը պետք է հեշտ լինի: Այդպիսի եզրակացությունները հաճախ հիմնված չեն լինում Աստվածաշնչի վրա:

Կան նաև այլ բաներ, որոնք քո ուսանողները կարող են ավելացնել Ուսանողի ձեռնարկում նշված ցուցակում: Ազա՛տ զգա նրանց մտքերը նույնպես ցուցակում ավելացնելու հարցում:

Ը. Ինչո՞ւ է աղոթքն այդքան դժվար:

1. Դու բարկացա՞ծ ես Աստծո վրա (Հոբ 21:15):
2. Դու համոզվա՞ծ ես, որ Աստված լսում է քո աղոթքները (Մարկոս 11:24):
3. Դու քո կյանքում շա՞տ խնդիրներ ես ունենում (Ղուկաս 18:1, Հակոբոս 5:13):
4. Դու հալածանքների՞ ես ենթարկվում (Մատթեոս 5:44):

Մեջբերումն արված է Ուսանողի ձեռնարկից, 42-44-րդ էջեր:

14. Անձնական կիրառություն (5-10 րոպե):

Այս դասն ավարտին հասցնելով՝ քաջալերի՛ր քո ուսանողներին, որ աղոթքը դարձնեն իրենց առօրյա կյանքի մի մասը: Շեշտի՛ր աղոթքի հիմունքները: Նույնիսկ փոքրիկ երեխան կարող է աղոթել, այնպես որ մենք չպետք է այն դիտենք որպես մեր կյանքի մի բարդ մաս:

Քաջալերի՛ր քո ուսանողներին, որ աղոթքը դարձնեն իրենց առօրյայի սովորական մասը: Հորդորի՛ր նրանց՝ կենտրոնանալ այն մտքի վրա, որ Աստծո՝ որպես իրենց Առաջնորդի հետ պետք է խոսեն օրվա ընթացքում իրենց հետ տեղի ունեցած ամեն ինչի մասին:

Դու կարող ես դասն ամփոփել՝ ուսանողներին բաժանելով զույգերի, որպեսզի մի աղոթք գրեն՝ օգտագործելով այն տեղեկությունները, որոնք մենք այսօրվա դասին քննարկեցինք: Կարող ես մի իրավիճակ տալ, որը տիպիկ է քո ուսանողների համար, և հանձնարարել նրանց՝ գրել աղոթք՝ կապված այդ իրավիճակի հետ:

Աղոթքը գրելուց հետո թող նրանցից մի քանիսը կարդան իրենց գրածը դասարանի համար:

15. Հանձնարարություններ:

Ա. Գնահատակա՛ն դիր այն հանձնարարությունների համար, որոնք դեռ չես գնահատել:

Բ. Թող քո ուսանողները պատրաստվեն ստուգարքի համար, որը հաջորդ դասաժամին է տրվելու:

16. Դասի գնահատում:

Խնդրում եմ՝ գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:
Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:
Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվարհասկանալի:
Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

Դաս 7.
Ստուգարք

1. **Ներկայացրո՛ւ հաջորդ դասընթացը, որը պետք է անցնեք:**

   Ա. Բաժանի՛ր Ուսուցման ուղեցույցը կամ որևէ այլ նախագիծ, որ պետք է ավարտված լինի նախքան հաջորդ դասընթացի առաջին դասաժամը:

   Բ. Թող ուսանողները բացեն Ուսուցման ուղեցույցի վերջին էջը: Նրանք այնտեղ պետք է գտնեն *Դասարանական Հանձնարարության Ցուցակ* մի դատարկ բլանկ: Ասա՛ նրանց յուրաքանչյուր հարցաշարի, նախագծի և ստուգարքի ամսաթվերը:

   Գ. Բաժանի՛ր նոր Ուսանողի ձեռնարկը և ասա՛ նրանց, թե որ թվերն են դու ուզում, որ նրանք կարդան նախքան առաջին դասաժամի սկսվելը:

2. **Անցկացրո՛ւ ստուգարք այս դասընթացի վերաբերյալ:**

   Դրա համար կա ստուգարքի երկու տարբերակ: Օգտագործի՛ր այն տարբերակը, որը քո կարծիքով ամենաօգտակարը կլինի ուսանողների համար:

3. **Եթե դեռ չես արել, վերադարձրո՛ւ այն բոլոր հարցաշարերն ու նախագծերը, որոնք գնահատել ես:**

7

Ուսանողի ձեռնարկ

Ուսանողի ձեռնարկը ներառված չէ այս փաստաթղթում, սակայն հասանելի է որպես առանձին փաստաթուղթ:

Ստուգի՛ր, թե «Ինչպե՛ս օգտագործել այս Ուսուցչի ձեռնարկը» բաժնի 5-րդ էջը՝ լրացուցիչ տեղեկությունների համար, և թե ինչպես օգտագործել Ուսանողի ձեռնարկը:

Ուսուցման ուղեցույց

Ուսուցման ուղեցույցը ներառված չէ այս փաստաթղթի մեջ, սակայն հասանելի է որպես առանձին փաստաթուղթ:

Ստուգի՛ր, թե «Ինչպե՛ս օգտագործել այս Ուսուցչի ձեռնարկը» բաժնի 5-րդ էջը՝ լրացուցիչ տեղեկությունների համար, և թե ինչպես օգտագործել Ուսուցման ուղեցույցը:

Ստուգարք

Պատասխաններ

Դասընթացի վկայական

Ստուգի՛ր, թե «Ինչպե՛ս օգտագործել այս Ուսուցչի ձեռնարկը» բաժնի 5-6-րդ էջը՝ լրացուցիչ տեղեկությունների համար, և թե ինչպես օգտագործել Ստուգարքն ու Վկայականը:

Անուն_____ **Քրիստոնեական պրակտիկա**

Ամսաթիվ_____ **Ստուգարք 1., 5-րդ խմբագրում**

Դասարան_____ _____**Գնահատական**

Ճիշտ-սխալ պատասխաններ (յուրաքանչյուրը 1 միավոր):

Ցուցումներ: Դի՛ր ____X____, եթե պատասխանը ճիշտ է:

Դի՛ր ____O____, եթե պատասխանը սխալ է:

1._____Սուրբ հաղորդությունն ու Տիրոջ ընթրիքը նույն բանն են:

2._____Նախքան հաղորդություն ընդունելը մարդու համար կարևոր է ինքնաքննության գալ և տեսնել, թե արդյոք մեղք չի՞ գործել:

3._____Մարդը ճշմարիտ քրիստոնյա դառնում է միայն ջրով մկրտվելուց հետո:

4._____Աղոթելիս պետք է թույլ տաս, որ Աստված խոսի քեզ հետ:

5._____Աստված չի ակնկալում, որ դու աշխատես և հոգ տանես քո և քո ընտանիքի համար:

6._____Աստված խոստացել է օգնել ճշմարիտ քրիստոնյաներին իրենց բոլոր կարիքների մեջ:

7._____Վկայություն տալիս դու միշտ պետք է քարոզես:

8._____Տեղական եկեղեցին Աստծո գործիքն է, որն օգնում է ճշմարիտ քրիստոնյաներին ավելի ուժեղ դառնալ:

9._____Դու պետք է նվազագույնը 3 տարվա հավատացյալ լինես, որպեսզի կարողանաս Աստծո տնտես դառնալ:

10._____Ճշմարիտ քրիստոնյաները երբևէ չպետք է գումարով օգնեն նրանց, ովքեր ճշմարիտ քրիստոնյաներ չեն:

11._____Եկեղեցի գնալու միակ նպատակը ճշմարիտ քրիստոնյա դառնալն է:

12._____Վկայություն տալիս դու պետք է միշտ մեկ օրինակ բերես քո կյանքից՝ ցույց տալու համար, թե ինչպես է Աստված քեզ օգնում աճել:

13._____Աստված միշտ պատրաստ է մարդկանց տալ իրենց բոլոր խնդրանքները, եթե նրանք աղոթելիս իրոք հավատան Աստծուն:

14._____Աստծո համար կարևոր չէ, թե ինչպես ես քո ժամանակն օգտագործում, եթե դու ճշմարիտ քրիստոնյա ես:

15._____Տեղական եկեղեցու գոյության հիմնական պատճառը ճշմարիտ քրիստոնյաներին օգնելն է, որպեսզի աճեն և ավելի ուժեղ դառնան:

16._____Մարդիկ պետք է միշտ պատմեն իրենց մեղսալից անցյալի մասին ամեն անգամ, երբ եկեղեցում վկայություն են տալիս:

17._____Հավատացյալների աճելու համար լավագույն ձևերից մեկն իրար հետ խոսելն է և միմյանց հետ իրենց հավատալիքներով, խնդիրներով ու հաջողություններով կիսվելը:

18._____Եթե ճշմարիտ քրիստոնյան ուզում է Աստծո լավ տնտես դառնալ, նա պետք է սովորի հավատարիմ լինել:

19._____Հաղորդության ծառայությանը մասնակցելիս դու պետք է մտածես, թե ինչ հաղորդակցություն ունես մյուս ճշմարիտ քրիստոնյաների հետ:

Բազմակի ընտրությամբ հարցեր:

Ընտրի՛ր ճիշտ պատասխանը և պատասխանի տառը դի՛ր գծիկի վրա (2 միավոր):

1._____Դու պետք է ջրով մկրտվես որովհետև.

Ա. Դու այդ ժամանակ կդառնաս ճշմարիտ քրիստոնյա:
Բ. Հիսուսն է ասել, որ դա անես:
Գ. Մովսեսը Կարմիր ծովը ցամաքով անցավ:

2._____Երբ մարդիկ *երկրպագում* են Աստծուն, նրանք պետք է.

Ա. Խնդրեն Աստծուն, որպեսզի օգնի իրենց ամենօրյա կյանքում:
Բ. Աղոթեն Աստծուն հիվանդ մարդու բժշկության համար:
Գ. Ասեն Աստծուն, թե ինչն են Նրա (Աստծո) մեջ հավանում:

3._____Դու պետք է տաս Աստծուն, որովհետև.

Ա. Դու պարտավոր ես:
Բ. Դու սիրում ես Նրան:
Գ. Եթե չտաս, չես կարող ճշմարիտ քրիստոնյա դառնալ:

4._____Ինչքա՞ն հաճախ մարդը պետք է պատմի իր անցյալ կյանքից, երբ եկեղեցում վկայություն է տալիս:

Ա. Ամեն անգամ վկայելիս:
Բ. Երբեմն:
Գ. Ոչ մի անգամ:

Համընկնող հարցեր:

Ճիշտ տառը գրի՛ր ճիշտ պատասխանի դատարկ գծիկի վրա (յուր. 3 միավոր):

1._____Հաղորդություն

2._____Աստծո տնտես

3._____Վկայություն

4._____Ջրի մկրտություն

5._____Տեղական եկեղեցի

6._____Աղոթք

Ա. Դու սա մեկ անգամ ես անում, որպեսզի ցույց տաս, որ դարձել ես ճշմարիտ քրիստոնյա:

Բ. Հիսուսին վերհիշելու և Նրա երկրորդ գալստյանը սպասելու համար է:

Գ. Աստծո հետ խոսելու միջոց է:

Դ. Աստված ուզում է, որ մենք Նրան տանք մեր վաստակած գումարի 10%-ը:

Ե. Ցույց է տալիս, թե ինչ է անում Աստված քո ամենօրյա կյանքում:

Զ. Մարդկանց խումբ, ովքեր միասին հավաքվում են քրիստոնեական հաղորդակցության համար:

Համառոտ պատասխանով հարցեր:

1. Հաղորդության ծառայության մեջ ի՞նչ է խորհրդապատկերում հացը (5 միավոր):

_____

2. Հաղորդության ծառայության մեջ ի՞նչ է խորհրդապատկերում գինին (5 միավոր):

_____

3. Ներքևում գրի՛ր անգիր համարներ (24 միավոր):

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

4. Գրի՛ր վկայություն՝ օգտագործելով դասարանում ներկայացրած չորս ուղեցույցները: Եթե լրացուցիչ թղթի կարիք ունենաս, դիմի՛ր ուսուցչիդ:

Համոզվի՛ր, որ քո առօրյա կյանքից մեկ օրինակ բերել ես, որը ցույց է տալիս, որ Աստված քեզ օգնում է աճել: Ցո՛ւյց տուր, թե ինչպես է աստվածաշնչյան համարը քեզ օգնել քո ամենօրյա կյանքի տվյալ ասպարեզում աճելու համար (21 միավոր):

Քրիստոնեական պրակտիկա
Ստուգարք 1. 5-րդ խմբագրում
պատասխաններ

Էջ 1.

Ճիշտ-սխալ հարցեր
(յուր. 1 միավոր)

1. X ճիշտ
2. X ճիշտ
3. O սխալ
4. X ճիշտ
5. O սխալ
6. X ճիշտ
7. O սխալ
8. X ճիշտ
9. O սխալ
10. O սխալ
11. O սխալ
12. X ճիշտ
13. O սխալ
14. O սխալ
15. X ճիշտ

Էջ 2.

16. O սխալ
17. X ճիշտ
18. X ճիշտ
19. X ճիշտ

Բազմակի ընտրությամբ հարցեր
(յուր. 2 միավոր)

1. Բ
2. Գ
3. Բ
4. Բ

Քրիստոնեական պրակտիկա
Ստուգարք 1. 5-րդ խմբագրում
պատասխաններ

Էջ 3.

Համընկնում (յուր. 3 միավոր)

1. Բ

2. Դ

3. Ե

4. Ա

5. Զ

6. Գ

Համառոտ շարադրությամբ հարցեր

1. 5 միավոր

   Քրիստոսի մարմինը

2. 5 միավոր

   Քրիստոսի արյունը

3. 24 միավոր

   Եփեսացիներին 4:29, Բ Կորնթացիներին 9:7, Կողոսացիներին 3:23

Էջ 4.

4. 21 միավոր

   Անձնական պատասխան

Քրիստոնեական պրակտիկա
Շարադրության ստուգարք 2. 5-րդ խմբագրում

Ցուցումներ.

Քո պատասխանները գրի՛ր առանձին տրված թղթի վրա: Մի՛ գրիր ստուգարքի թղթի վրա: Պատասխանները գրի՛ր ինչքան հնարավոր է՝ հստակ: Կոնկրե՛տ եղիր: Որոշ հարցեր նշում են, թե քանի մասեր և առանձին պատասխաններ դու պետք է գրես տվյալ հարցի համար՝ ամբողջական միավոր ստանալու համար: Որոշ հարցեր մեկ այլ էլ հարց ունեն փակագծերում: Սա նույն հարցն է՝ միայն պարզեցնելու նպատակով այլ բառերով շարադրված:

Հարցեր.

1. Ո՞րն է ջրի մկրտության նպատակը:
   (Ինչո՞ւ դու պետք է ջրով մկրտվես), (10 միավոր):

2. Հաղորդության ծառայությանը մասնակցելիս ինչի՞ մասին դու պետք է մտածես:
   (Ինչո՞ւ ենք մենք հաղորդության ծառայություն կազմակերպում):
   Պատասխան 5 մասով (յուր. մասը 3 միավոր):

3. Ինչպե՞ս կարող ես դառնալ Աստծո տնտես (5 միավոր):

4. Գրի՛ր երեք ասպարեզներ, որոնք Աստված քեզ տվել է տնօրինելու:
   Բացատրի՛ր, թե ինչպես կարող ես դառնալ լավ տնտես դրանցից յուրաքանչյուրի համար, և ինչպես դա անելը կարող է ազդել քո ամենօրյա կյանքի վրա:
   Պատասխան 3 մասով (յուր. ամբողջական պատասխանի համար 5 միավոր):

5. Ինչո՞ւ գոյություն ունի տեղական եկեղեցի:
   (Որո՞նք են տեղական եկեղեցու երկարաժամկետ նպատակները):
   Պատասխան 2 մասով (յուր. մասը 5 միավոր):

6. Դասարանում մենք քննարկեցինք, թե մարդն ինչ կարող է անել տեղական եկեղեցում իր մասնակցությունը վայելելու համար: Կան չորս ուղեցույցներ կամ սկզբունքներ, որոնք բնութագրում են առողջ եկեղեցին: Թվարկի՛ր այդ ուղեցույցներից երեքը (յուր. մասը 4 միավոր):

7. Գրի՛ր քո վկայությունը՝ օգտագործելով դասարանում ներկայացրած ուղեցույցները: Ցո՛ւյց տուր, թե ինչպես է աստվածաշնչյան համարը քեզ օգնել քո կյանքի կոնկրետ իրավիճակում (16 միավոր):

8. Բե՛ր մեկ կոնկրետ աղոթքի օրինակ, որին Աստված պատասխանել է անցած շաբաթ (5 միավոր):

9. Գրի՛ր անգիր համարներ (12 միավոր, յուր. համարի համար 4 միավոր):

Քրիստոնեական պրակտիկա

Ստուգարք 2. Շարադրության ստուգարք

5-րդ խմբագրում

Պատասխաններ

Նշում ուսուցչի համար. Պատասխանները պետք է գրվեն առանձին թղթի վրա: Ներքևում նշված՝ առաջարկվող պատասխաններն ընդամենն *ուրվագծային* են: Դու կարող ես ուսանողներից պահանջել, որ գրեն ավելին, քան ներքևում նշված որոշ պատասխաններ:

1. **Ո՞րն է ջրի մկրտության նպատակը (ինչո՞ւ դու պետք է ջրով մկրտվես),** (10 միավոր):

   - Աստծուն հնազանդվելու համար:

   - Դա հրապարակային վկայություն է առ այն, որ ես դարձել եմ ճշմարիտ քրիստոնյա:

   - Դա մեկ այլ քայլ է իմ հոգևոր աճի մեջ:

2. **Հաղորդության ծառայությանը մասնակցելիս ինչի՞ մասին դու պետք է մտածես: (Ինչո՞ւ մենք ունենք հաղորդության ծառայություն):**
   Պատասխան 5 մասով (յուր. մասը 3 միավոր):

   Առաջարկվող պատասխաններ.

   1. Աստծուն երկրպագելու:
   2. Հիշատակելու, որ Հիսուսը մահացել է մեզ համար:
   3. Հիշեցնելու Հիսուսի երկրորդ գալստյան մասին:
   4. Ինքնաքննության գալու.
      ա. Խնդրի՛ր Աստծուն, որ ների քո մեղքերը:
      բ. Տե՛ս, թե արդյո՞ք հասել ես քո նպատակներին:
   5. Քննի՛ր մարդկանց հետ ունեցած քո փոխհարաբերությունները.
      ա. Ներո՛ւմ խնդրիր:
      բ. Քաջալերե՛ք ինչ-որ մեկին:
      գ. Շնորհակալությո՛ւն հայտնիր ինչ-որ մեկին իր արած լավ գործի համար:

3. **Ինչպե՞ս կարող ես դառնալ Աստծո տնտես** (5 միավոր):

Առաջարկվող պատասխաններ.

- Կյանքս Քրիստոսին հանձնելով:

- Հավատարիմ լինելով:

4. **Գրի՛ր երեք ասպարեզներ, որոնք Աստված քեզ տվել է տնօրինելու: Բացատրի՛ր, թե ինչպես կարող ես դառնալ լավ տնտես դրանցից յուրաքանչյուրի համար, և ինչպես դա անելը կարող է ազդել քո ամենօրյա կյանքի վրա:**
Պատասխան 3 մասով (15 միավոր, յուր. ամբողջական պատասխանի համար հինգ միավոր):

Առաջարկվող պատասխաններն ընդամենը պատասխանների առաջին մասն են: Նրանք պետք է բացատրեն իրենց պատասխանների մնացած մասն ըստ հարցի պահանջի, որպեսզի ամբողջական միավոր ստանան:

1. Ժամանակ
2. Գումար
3. Սուրբ Հոգու պարգևները
4. Ընտանիք
5. Աշխատանք

5. **Ինչո՞ւ գոյություն ունի տեղական եկեղեցի (որո՞նք են տեղական եկեղեցու երկարաժամկետ նպատակները):**
Պատասխան 2 մասով (յուր. մասը 5 միավոր).

1. Որպեսզի օգնեն ճշմարիտ քրիստոնյաներին հոգևորապես աճելու և ավելի ուժեղ դառնալու համար:
2. Որպեսզի Քրիստոսի մասին կիսվեն նրանց հետ, ովքեր ճշմարիտ քրիստոնյաներ չեն:

6. **Դասարանում մենք քննարկեցինք, թե մարդն ինչ կարող է անել տեղական եկեղեցում իր մասնակցությունը վայելելու համար: Կան չորս ուղեցույցներ կամ սկզբունքներ, որոնք բնութագրում են առողջ եկեղեցին: Թվարկի՛ր այդ ուղեցույցներից երեքը** (4 միավոր, յուր. մասը 12 միավոր):

   Առաջարկվող պատասխաններ.

   1. Մարդիկ, ովքեր մեկտեղ են գալիս հաղորդակցվելու:
   2. Մարդիկ, ովքեր մեկտեղ են գալիս Աստծուն երկրպագելու և աղոթելու:
   3. Մարդիկ, ովքեր մեկտեղ են գալիս Աստծուն լսելու:
   4. Մարդիկ, ովքեր մեկտեղ են գալիս մեկը մյուսին օգնելու:

7. **Գրի՛ր քո վկայությունը՝ օգտագործելով դասարանում ներկայացրած ուղեցույցները: Ցո՛ւյց տուր, թե ինչպես է աստվածաշնչյան տվյալ համարը քեզ օգնել քո կյանքի կոնկրետ իրավիճակում**
   (4 միավոր, յուր. մասը 16 միավոր):

   Նշում ուսուցչի համար. ուսանողների վկայությունը պետք է ներառի այն չորս ուղեցույցները, որոնք օգտագործվում են այս դասընթացին:

   Ահա այդ ուղեցույցները (Ուսանողի ձեռնարկ, էջ 10-րդ).

   1. Պատմի՛ր քո կյանքի մի ասպարեզի մասին, որտեղ Աստված քեզ օգնում է աճել:
   2. Հիշեցրո՛ւ աստվածաշնչյան մի համար, որը քեզ օգնել է այդ ասպարեզում աճել:
   3. Պատմի՛ր, թե ինչպես ես դու օգտագործել այդ համարը՝ քո կյանքի տվյալ ասպարեզում քեզ օգնելու համար:
   4. Վերջին մի քանի օրերից մի կոնկրետ օրինա՛կ բեր, թե ինչպես ես դու այդ համարն օգտագործել:

8. **Բե՛ր աղոթքի մեկ կոնկրետ օրինակ, որին Աստված պատասխանել է քեզ անցյալ շաբաթ** (5 միավոր):

   Անձնական պատասխան.

   Օգտագործի՛ր քո սեփական դատողությունն այս հարցին տված նրանց պատասխանը գնահատելու համար:

9. **Գրի՛ր անգիր համարներ** (12 միավոր, յուր. համարի համար 4 միավոր):

   Եփեսացիներին 4:29, Բ Կորնթացիներին 9:7, Կողոսացիներին 3:23

Շնորհավորում ենք

_____

-ին, առ այն, որ նա ավարտել է

Քրիստոնեական պրակտիկա

դասընթացի ուսումնական պահանջները:
Մենք գնահատում ենք Ձեր մասնակցությունը այս դասընթացին և հուսով ենք, որ Դուք հաջողությամբ կշարունակեք Ձեր կյանքում կիրառել այն աստվածաշնչյան ուսուցումները, որոնք դուք սովորել եք այս դասընթացի ընթացքում:

Ուսուցիչ _____

Ամիս, ամսաթիվ _____

Շնորհավորում ենք

_____

-ին, առ այն, որ նա ավարտել է

Քրիստոնեական պրակտիկա

դասընթացի ուսումնական պահանջները:
Մենք գնահատում ենք Ձեր մասնակցությունը այս դասընթացին և հուսով ենք, որ Դուք հաջողությամբ կշարունակեք Ձեր կյանքում կիրառել այն աստվածաշնչյան ուսուցումները, որոնք դուք սովորել եք այս դասընթացի ընթացքում:

Ուսուցիչ _____

Ամիս, ամսաթիվ _____